

Հավելված N1
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 28-ի N 1752 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ծրագրային դասիչը		Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի և միջոցառումների անվանումները	(հազ. դրամ)
			Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
ծրագիրը	միջոցառումը		տարի
1049		Ծրագրի անվանումը	-
		Ճանապարհային ցանցի բարելավում	
		Ծրագրի նպատակը	
		Ճանապարհային ցանցի բարելավում և անվտանգ երթևեկության ապահովում	
		Վերջնական արդյունքի նկարագրությունը	
		Ճանապարհների ծածկի որակի և փոխադրումների արդյունավետության բարելավում՝ ճանապարհների վիճակով պայմանավորված պատահարների նվազում	
Ծրագրի միջոցառումներ			
	11013	Միջոցառման անվանումը	(170,000.0)
		Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և կառավարում	

	<p>Միջոցառման նկարագրությունը</p> <p>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ: 3-րդ Տրանշ</p> <p>Միջոցառման տեսակը</p> <p>Ծառայությունների մատուցում</p>	
11015	<p>Միջոցառման անվանումը</p> <p>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի համակարգում և կառավարում (Տրանշ 3)</p> <p>Միջոցառման նկարագրությունը</p> <p>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի իրականացման նպատակով ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրում: Լանջիկ-Գյումրի Հատված (Տրանշ 3)</p> <p>Միջոցառման տեսակը</p> <p>Ծառայությունների մատուցում</p>	170,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 28-ի N 1752 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ
NN 3 ԵՎ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

Գործառական դասիչը			Ծրագրային դասիչը		Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, բյուջետային ծրագրերի միջոցառումների, բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
Մոլված	Մեկուս	Մոմի	Մեկնուծ	Միջոցառում		տարի
					ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	0.0
04					ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	0.0
					այդ թվում՝	
	05				Տրանսպորտ	0.0
					այդ թվում՝	
		01			Ճանապարհային տրանսպորտ	0.0
					այդ թվում՝	
					ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	0.0
					այդ թվում՝	
			1049		Ճանապարհային ցանցի բարելավում	0.0

				այդ թվում՝	
			11013	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և կառավարում	(170,000.0)
				այդ թվում՝ ըստ կատարողների	
				ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	(170,000.0)
				այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ	
				- Այլ ծախսեր	(170,000.0)
			11015	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի համակարգում և կառավարում (Տրանշ 3)	170,000.0
				այդ թվում՝ ըստ կատարողների	
				ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	170,000.0
				այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ	
				- Այլ ծախսեր	170,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 28-ի N 1752 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

Ծրագրային դասիչը		Բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների, ծրագրերի, միջոցառումների և միջոցառումները կատարող պետական մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)		
ծրագիրը	միջոցառումը		տարի		
			ընդամենը	այդ թվում՝	
				վարկային միջոցներ	համաֆինանսավորում
		ԸՆԴԱՄԵՆԸ	170,000.0	0.0	170,000.0
		այդ թվում՝			
		- ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	170,000.0	0.0	170,000.0
		- ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	0.0	0.0	0.0
		ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	170,000.0	0.0	170,000.0
		այդ թվում՝			
1049		Ճանապարհային ցանցի բարելավում			
	11015	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի համակարգում և կառավարում (Տրանշ 3)	170,000.0	0.0	170,000.0
		այդ թվում՝ ըստ կատարողների			
		ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	170,000.0	0.0	170,000.0

		այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ			
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	170,000.0	0.0	170,000.0
		ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	170,000.0	0.0	170,000.0
		ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	170,000.0	0.0	170,000.0
		- Այլ ծախսեր	170,000.0	0.0	170,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 28-ի N 1752 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ
N 4 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

Ծրագրային դասիչը		Բյուջետային հասկացումների գլխավոր կարգադրիչների, ծրագրերի, միջոցառումների և միջոցառումները կատարող պետական մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում)		
Նմանակ ընթացակարգ միջոցառում	Վիճակագրական միջոցառում		տարի		
			ընդամենը	այդ թվում՝	
				վարկային միջոցներ	համաֆինանսավորում
		ԸՆԴԱՄԵՆԸ	(170,000.0)	0.0	(170,000.0)
		այդ թվում՝			
		- ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	(170,000.0)	0.0	(170,000.0)
		- ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	0.0	0.0	0.0
		ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն այդ թվում՝	(170,000.0)	0.0	(170,000.0)
1049		Ճանապարհային ցանցի բարելավում այդ թվում՝			
	11013	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և կառավարում այդ թվում՝ ըստ կատարողների	(170,000.0)	0.0	(170,000.0)
		ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ	(170,000.0)	0.0	(170,000.0)
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ	(170,000.0)	0.0	(170,000.0)
		ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	(170,000.0)	0.0	(170,000.0)
		ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	(170,000.0)	0.0	(170,000.0)
		- Այլ ծախսեր	(170,000.0)	0.0	(170,000.0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.8 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԳՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը	
1049	Ճանապարհային ցանցի բարելավում	
Ծրագրի միջոցառումները		
		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
Ծրագրի դասիչը	1049	
Միջոցառման դասիչը	11015	տարի
Միջոցառման անվանումը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի համակարգում և կառավարում (Տրանշ 3)	
Նկարագրությունը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի իրականացման նպատակով ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրում: Լանջիկ-Գյումրի Հատված (Տրանշ 3)	
Միջոցառման տեսակը	Ծառայությունների մատուցում	
Միջոցառումն իրականացնողի անվանումը	Մասնագիտացված միավոր	

Արդյունքի չափորոշիչներ		
Խորհրդատուների քանակ		1
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		170,000.0
		Ցուցանիշների փոփոխությունը (նվազեցումները նշված են փակագծերում)
Ծրագրի դասիչը	1049	
Միջոցառման դասիչը	11013	տարի
Միջոցառման անվանումը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և կառավարում	
Նկարագրությունը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ: 3-րդ Տրանշ	
Միջոցառման տեսակը	Ծառայությունների մատուցում	
Միջոցառումն իրականացնողի անվանումը	Մասնագիտացված միավոր	
Արդյունքի չափորոշիչներ		
Խորհրդատվությունների (պայմանագրերի) քանակը, հատ		
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		(170,000.0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11.1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.1.8 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԳՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը	
1049	Ճանապարհային ցանցի բարելավում	
Ծրագրի միջոցառումները		
Միջոցառման դասիչը	11015	տարի
Միջոցառման անվանումը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի համակարգում և կառավարում (Տրանշ 3)	
Նկարագրությունը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի իրականացման նպատակով ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրում: Լանջիկ-Գյումրի Հատված (Տրանշ 3)	
Միջոցառման տեսակը	Ծառայությունների մատուցում	
Միջոցառումն իրականացնողի անվանումը	Մասնագիտացված միավոր	
Արդյունքի չափորոշիչներ		
Խորհրդատուների քանակ	1	
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)	170,000.0	

		Ցուցանիշների փոփոխությունը (սվազեցումները նշված են փակագծերում)
Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը	
1049	Ճանապարհային ցանցի բարելավում	
Ծրագրի միջոցառումները		
Ծրագրի դասիչը	1049	
Միջոցառման դասիչը	11013	տարի
Միջոցառման անվանումը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և կառավարում	
Նկարագրությունը	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ: 3-րդ Տրանշ	
Միջոցառման տեսակը	Ծառայությունների մատուցում	
Միջոցառումն իրականացնողի անվանումը	Մասնագիտացված միավոր	
Արդյունքի չափորոշիչներ		
Խորհրդատվությունների (պայմանագրերի) քանակը, հատ		
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)		(170,000.0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 28-ի N 1752 - Ն որոշման

**Խորհրդատվական ծառայությունների
մատուցման պայմանագիր**

Պայմանագիր թիվ

**«ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

և

միջև

Տարեթիվը՝

I. Պայմանագրի ձևը

ԺԱՄԱՆԱԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ

Սույն ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (այսուհետ «Պայմանագիր») կնքվել է
 «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ (այսուհետ՝
 «Պատվիրատու»)՝ մի կողմից և միջև, և (այսուհետ՝ «Խորհրդատու»)՝ մյուս
 կողմից:

Որտեղ՝

(ա) Պատվիրատուն դիմել է Խորհրդատուին տրամադրել որոշակի խորհրդատվական ծառայություններ, ինչպես նշված է Պայմանագրում (այսուհետ՝ Ծառայություններ):

(բ) Խորհրդատուն, ապացուցելով Պատվիրատուին, որ ինքն ունի պահանջվող մասնագիտական հմտությունները, աշխատակազմն ու տեխնիկական ռեսուրսները, համաձայնել է Ծառայություններ մատուցել սույն Պայմանագրում նշված պայմաններով:

(գ) Պատվիրատուն վարկը ստացել է Եվրոպական ներդրումային բանկի բանկի կողմից Ծառայությունների ձեռքբերման նպատակով և կիրառելու է վարկային միջոցների մի մասը սույն Պայմանագրով նախատեսված վճարումներ կատարելու համար Պայմանագրով սահմանված կարգով, ինչը նշանակում է, որ (i) Բանկը վճարումները կատարելու է միայն Պատվիրատուի պահանջով և Բանկի հաստատմամբ, (ii) նշված վճարումները, բոլոր առումներով, ենթակա են լինելու վարկային համաձայնագրի դրոյթներին և պայմաններին, այդ թվում՝ վարկի հաշվից մասհանման արգելում, անձանց կամ մարմիններին ցանկացած վճարման նպատակով, կամ որևէ ապրանքի ներմուծման դիմաց, եթե նշված վճարումը կամ ներմուծումը, Բանկի տվյալներով, արգելված է ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի ներքո Անվտանգության խորհրդի կողմից ընդունված որոշումներով, և (iii) Պատվիրատուից բացի որևէ անձ չպետք է որևէ իրավունք կամ որևէ պահանջ ունենա վարկային համաձայնագրից ստացվող վարկային միջոցների նկատմամբ:

Սույնով կողմերը համաձայնում են, որ.

1. Հետևյալ փաստաթղթերը հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժան մասը.
 - (ա) Պայմանագրի Ընդհանուր պայմաններ (ներառյալ՝ Առդիր 1. Բանկի քաղաքականություն - Կոռուպցիա և կեղծիք
 - (բ) Պայմանագրի Հատուկ պայմաններ
 - (գ) Հավելվածներ.

Հավելված Ա՝ Տեխնիկական առաջադրանք

- Հավելված Բ՝ Հիմնական փորձագետներ
- Հավելված Գ՝ Վարձատրություն, նախահաշիվներ
- Հավելված Դ՝ Այլ ծախսեր, պայմանական գումարներ և չնախատեսված ծախսեր, նախահաշիվներ
- Հավելված Ե՝ Կանխավճարի ապահովման բանկային երաշխիքի ձև

Փաստաթղթերի միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայությունը դրանց պետք է տրվի հետևյալ կարգով՝ Պայմանագրի հատուկ պայմաններ, Պայմանագրի ընդհանուր պայմաններ, ներառյալ՝ Առդիր 1, Հավելված Ա, Հավելված Բ, Հավելված Գ և Հավելված Դ, Հավելված Ե: Սույն Պայմանագրին ցանկացած հղում՝ ելնելով համատեքստից, պետք է հղում անի նաև նրա Հավելվածներին:

2. Պատվիրատուի և Խորհրդատուի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները ներկայացվում են Պայմանագրում, մասնավորապես՝
 - (ա) Խորհրդատուն պետք է Ծառայությունները մատուցի համաձայն Պայմանագրի դրույթների, և
 - (բ) Պատվիրատուն պետք է Խորհրդատուին վճարի համաձայն Պայմանագրի դրույթների:
 - (գ) Պայմանագրի գործողությունը տարածվում է 2019 թվականի սեպտեմբերի 12-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Սույն Պայմանագիրը ստորագրվեց Կողմերի ներկայացուցիչների ներկայությամբ ստորև նշված ամսաթվին:

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ

Խորհրդատուի անունից

.....

Նախաբան

1. Պայմանագրի ստանդարտ ձևը բաղկացած է չորս մասից՝ Պայմանագրի ձևը, որը ստորագրվելու է Պատվիրատուի և Խորհրդատուի կողմից, Պայմանագրի ընդհանուր պայմաններ (ՊԸՊ), ներառյալ Առդիր 1 (Բանկի քաղաքականություն - Կոռուպցիա և կեղծիք), Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ) և Հավելվածներ:
2. Պայմանագրի ընդհանուր պայմանները, ներառյալ Առդիր 1-ը, փոփոխման ենթակա չեն: Պայմանագրի հատուկ պայմանները, որոնք ներառում են յուրաքանչյուր Պայմանագրի համար հատուկ դրույթներ, լրացնում են Պայմանագրի Ընդհանուր Դրույթները և երբեք չեն կարող վերախմբագրել դրանք կամ հակասել դրանց:

II. Պայմանագրի Ընդհանուր պայմաններ

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Սահմանումներ

1.1. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, սույն Պայմանագրում կիրառված սահմանումները ունեն հետևյալ նշանակությունները.

1. «Գործող ուղեցույցներ» նշանակում է Եվրոպական ներդրումային բանկի և իր Վարկառուների կողմից Խորհրդատուների կիրառման ուղեցույց:
2. «Գործող Օրենսդրություն»-ը կամ օրենքի ուժ ունեցող որևէ այլ նորմատիվ ակտ, այն օրենքն է, որը գործում է Պատվիրատուի երկրում, կամ ժամանակ առ ժամանակ Պայմանագրերի Հատուկ պայմաններով նշված որևէ այլ երկրում (ՊՀՊ):
3. «Բանկ» նշանակում է Եվրոպական ներդրումային բանկը:
4. «Վարկառու» նշանակում է Կառավարությունը, Կառավարության գործակալությունը կամ այն մարմինը, որը ստորագրում է վարկային համաձայնագիրը Բանկի հետ:
5. «Պատվիրատու»-ն իրականացնող կազմակերպությունն է, որը կնքում է Ծառայությունների մատուցման պայմանագիր ընտրված Խորհրդատուի հետ:
6. «Խորհրդատուն» իրավաբանորեն հաստատված մասնագիտական խորհրդատվական ընկերություն է, որն ընտրվել է Պատվիրատուի կողմից՝ կնքված Պայմանագրի ներքո Ծառայություններ մատուցելու նպատակով:
7. «Պայմանագիրը» նշանակում է պարտադիր ուժ ունեցող համաձայնագիր, որը ստորագրվել է Պատվիրատուի և Խորհրդատուի կողմից և ներառում է կից փաստաթղթեր, որոնց ցանկը ներկայացված է սույն Պայմանագրի Ձևի պարբերություն 1-ում (Պայմանագրի Ընդհանուր պայմաններ (ՊԸՊ), Պայմանագրի հատուկ պայմաններ (ՊՀՊ) և Հավելվածներ:
8. «Օր» նշանակում է աշխատանքային օր, եթե այլ բան նախատեսված չէ:

9. «Ուժի մեջ մտնելու օրը» այն ամսաթիվն է, որից ի վեր սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում համաձայն ՊԸՊ-ի Հոդված 11-ի:
10. «Փորձագետներ» նշանակում է հիմնական փորձագետներ, ոչ հիմնական փորձագետներ կամ Խորհրդատուի, ենթախորհրդատուների կամ ՀՁ անդամի(ների) այլ անձնակազմ, ովքեր նշանակվել են խորհրդատուի կողմից Ծառայություններ կամ սույն Պայմանագրի այլ մասեր իրականացնելու նպատակով:
11. «Արտարժույթ» նշանակում է բացի Պատվիրատուի երկրի արժույթից ցանկացած այլ տարադրամ:
12. «ՊԸՊ» նշանակում է Պայմանագրի ընդհանուր պայմաններ:
13. «Կառավարությունը» Պատվիրատուի երկրի կառավարությունն է:
14. «Համատեղ ձեռնարկություն»-ը (ՀՁ) իր անդամներից առանձին իրավունակություն ունեցող կամ չունեցող միավորումն է, բաղկացած մեկից ավելի մարմնից, որտեղ անդամներից մեկը իրավասու է վարել ՀՁ-ի գործունեության բոլոր տեսակները ՀՁ-ի ցանկացած այլ կամ բոլոր անդամների անունից, և որտեղ ՀՁ-ի անդամները առանձին-առանձին և միասին պատասխանատու են Պատվիրատուին Պայմանագրի իրականացման համար:
15. «Հիմնական փորձագետ (փորձագետներ)» նշանակում է անհատ մասնագետ, ում հմտությունները, որակավորումը, գիտելիքները և փորձը կարևոր են Պայմանագրի ներքո Ծառայությունների կատարման համար և ում հնքնակենսագրականը (CV) հաշվի է առնվել Խորհրդատուի առաջարկի տեխնիկական գնահատման գործընթացում:
16. «Տեղական արժույթը» Պատվիրատուի երկրի տարադրամն է:
17. «Ոչ հիմնական փորձագետ (ներ) » նշանակում է Խորհրդատուի կամ ենթախորհրդատուի կողմից նշանակված այն անհատ մասնագետը, ով պետք է իրականացնի Ծառայությունները կամ սույն Պայմանագրի որևէ մասը:
18. «Կողմը» Պատվիրատուն կամ Խորհրդատուն է՝ կախված հանգամանքներից, իսկ «Կողմերը»՝ երկուսը միասին:

19. «ՊՀՊ» նշանակում է Պայմանագրի հատուկ պայմաններ, որոնցով կարող են փոփոխվել կամ լրացվել, սակայն չվերախմբավորվել ՊՀՊ-ները:
20. «Ծառայությունները» այն աշխատանքներն են, որոնք պետք է կատարվեն Խորհրդատուի կողմից համաձայն սույն Պայմանագրի, ինչպես նկարագրված է Հավելված Ա-ում:
21. «Ենթախորհրդատուն» որևէ կազմակերպություն է, որի հետ Խորհրդատուն Ծառայությունների մի մասի համար ենթապայմանագիր է կնքում՝ մնալով ամբողջովին պատասխանատու Պայմանագրի իրականացման համար:
22. «Երրորդ կողմ» նշանակում է ցանկացած անհատ կամ կազմակերպություն՝ բացի Կառավարությունից, Պատվիրատուից, Խորհրդատուից կամ ենթախորհրդատուից:

2. Կողմերի փոխհարաբերությունները

2.1. Պատվիրատուի և Խորհրդատուի միջև հարաբերություններն ըստ սույն Պայմանագրի չպետք է մեկնաբանվեն որպես գործատուի և աշխատակցի կամ վերադասի և ստորադասի հարաբերություններ: Խորհրդատուն սույն Պայմանագրով վճարում է Ծառայություններ մատուցող փորձագետներին և ենթախորհրդատուներն, եթե այդպիսիք կան, և ամբողջովին պատասխանատու է նրանց կողմից կամ նրանց անունից մատուցված ծառայությունների համար:

3. Պայմանագիր կարգավորող օրենսդրություն

3.1. Սույն Պայմանագիրը, դրա բովանդակությունը և մեկնաբանությունը, և կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են Գործող օրենսդրությամբ:

4. Լեզու

4.1. Սույն պայմանագիրը կնքվել է ՊՀՊ-ում սահմանված լեզվով, որը հանդիսանում է իրավական և վերահսկիչ ուժ ունեցող լեզու սույն Պայմանագրի նշանակության կամ բովանդակության մեկնաբանման բոլոր դեպքերի համար:

5. Վերնագրերը

5.1. Վերնագրերը չպետք է սահմանափակեն, փոփոխեն սույն Պայմանագրի բովանդակությունը կամ ազդեն դրա վրա:

6. Կապ

6.1 Սույն Պայմանագրով Կողմերի միջև կապը պետք է լինի գրավոր ձևով՝ ՊՀՊ-ի Հոդված 4-ով սահմանված լեզվով: Ցանկացած ծանուցագիր, պահանջագիր կամ համաձայնագիր պետք է փոխանցվի կամ ուղարկվի անձամբ Կողմերի լիազոր ներկայացուցչին, կամ նրան ում ուղղված է հաղորդագրությունը, կամ պետք է ուղարկի ՊՀՊ-ում նշված հասցեով:

6.1 Կողմերը կարող են փոխել ՊՀՊ-ում նշված իրենց հասցեները՝ մյուս Կողմին տեղեկացնելով այդ փոփոխության մասին:

7. Վայրը

7.1. Ծառայությունները պետք է կատարվեն այն վայրերում, որոնք նշված են **Հավելված Ա-ում**, իսկ եթե հանձնարարության կատարման վայրը հատուկ նշված չէ, Պատվիրատուն պետք է այն հաստատի, լինի դա Կառավարության երկիրը, կամ ցանկացած այլ վայր::

8. Պատասխանատու անդամի լիազորությունները

8.1. Եթե Խորհրդատու կազմակերպությունը համատեղ ձեռնարկություն է, ապա դրա անդամները պետք է լիազորեն ՊՀՊ-ում նշված լիազորված անդամին, որպեսզի վերջինս կարողանա գործել իրենց բոլորի անունից Պատվիրատուի նկատմամբ Խորհրդրդատուի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները իրացնելու համար՝ այդ թվում Պատվիրատուից հանձնարարություններ և վճարումներ ստանալու համար՝ առանց սահմանափակման:

9. Լիազոր ներկայացուցիչներ

9.1. Պատվիրատուի կամ Խորհրդատուի կողմից սույն Պայմանագրի կատարման համար թույլատրվող կամ պահանջվող ցանկացած գործողություն կատարել կամ ցանկացած փաստաթուղթ կազմել կարող են միայն ՊՀՊ-ում նշված անձիք:

10. Կոռուպցիա և խարդախությունը

10.1. Բանկը պահանջում է համապատասխանել իր քաղաքականությանը, որը վերաբերում է կոռուպցիոն և խարդախ/արգելված գործունեությանը, ինչպես սահմանված է ՊՀՊ-ի Առդիր 1-ում:

ա.

Միջնորդավճարներ և վճարներ

10.2. Պատվիրատուն պահանջում է Խորհրդատուից հայտնել ցանկացած միջնորդավճարի, դրամական պարզևի կամ վճարման մասին, որը տրվել է գործակալներին կամ ցանկացած այլ կողմի ընտրության գործընթացի կամ Պայմանագրի կատարման ընթացքում: Հայտնած տեղեկությունը պետք է պարունակի առնվազն գործակալի կամ այլ կողմի անունը և հասցեն, գումարը և տարադրամը, ինչպես նաև տրված միջնորդավճարների, դրամական պարզևի, կամ այլ վճարումների նպատակները: Նշված միջնորդավճարների կամ դրամական պարզևների մասին չհայտնումը կարող է հանգեցնել Պայմանագրի դադարեցմանը:

Բ. Պայմանագրի մեկնարկը, ավարտը, փոփոխումներն ու լուծումը

- 11. Պայմանագրի ուժի մեջ մտնելը** 11.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և սկսում է գործել Պատվիրատուի կողմից Խորհրդատուին Ծառայությունների մատուցումը սկսելու մասին ծանուցագիրն ուղարկելուն պես («Ուժի մեջ մտնելու տարեթիվ»): Այս ծանուցագիրը հաստատում է ՊՀՊ-ում տրված պայմանների հապահովված լինելը, եթե այդպիսիք կան:
- 12. Պայմանագրի լուծելը՝ դրա ուժի մեջ չմտնելու պատճառով** 12.1. Եթե սույն Պայմանագիրը ուժի մեջ չի մտնում դրա ստորագրումից հետո և ՊՀՊ-ում նշված ժամանակահատվածում, յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի ոչ պակաս, քան քսաներկու (22) օրվա ընթացքում սույն Պայմանագիրն անվավեր հայտարարել մյուս Կողմին այդ մասին գրավոր Ծանուցագիր ուղարկելուց հետո: Կողմերից ցանկացածից եկող նմանատիպ ծանուցագրի առկայության դեպքում ոչ մի Կողմը մյուսի նկատմամբ Պայմանագրի վերաբերյալ որևէ պահանջ ունենալ չի կարող:
- 13. Ծառայությունների մատուցման մեկնարկը** 13.1. Խորհրդատուն պետք է հաստատի Հիմնական փորձագետների հասանելիությունը և սկսի մատուցել Ծառայությունները Պայմանագիրն Ուժի մեջ մտնելուց հետո ՊՀՊ-ում սահմանված օրերի ընթացքում
- 14. Պայմանագրի ավարտը** 14.1. Եթե Պայմանագիրը ավելի վաղ չլուծվի ըստ ՊԸՊ 19-ի, ապա սույն Պայմանագիրն ավարտված կհամարվի ՊՀՊ-ում նշված ժամկետից հետո:
- 15. Ողջ Համաձայնագիրը** 15.1. Այս Պայմանագիրը պարունակում է Կողմերի կողմից համաձայնեցված բոլոր համաձայնագրերը, ձևակերպումներն ու դրույթները: Կողմերի և ոչ մի գործակալ կամ ներկայացուցիչ լիազորություն չունի կատարելու Պայմանագրից դուրս որևէ հայտարարություն, իսկ Կողմերը կատարված հայտարարության, խոստումի կամ համաձայնագրի համար պարտավորություն կամ պատասխանատվություն չեն կրում:
- 16. Փոփոխություններ** 16.1 Պայմանագրի դրույթների և պայմանների ցանկացած փոփոխություն, այդ թվում Ծառայությունների տեսակի որևէ փոփոխություն, կարելի է կատարել միայն Կողմերի միջև կնքվող գրավոր համաձայնագրով: Յուրաքանչյուր

Կողմ մյուս Կողմի ներկայացրած՝ փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկի կապակցությամբ պետք է ներկայացնի իր նկատառումները:

16.2 Էական փոփոխություններ կատարելու դեպքում Բանկի գրավոր համաձայնությունը պարտադիր է:

17. Անհաղթահարելի ուժ

ա. Սահմանում

17.1 Սույն Պայմանագրի շրջանակներում, “Անհաղթահարելի ուժ” նշանակում է իրադարձություն, որը Կողմերի վերահսկողությունից դուրս է, անկանխատեսելի է և անխուսափելի, և որի հետևանքով Կողմերի պարտավորությունների կատարումը դառնում է անհնար կամ այնքան դժվար իրագործելի տվյալ պայմաններում, որ կարող է համարվել անիրագործելի: Անհաղթահարելի ուժը ներառում է հետևյալ դեպքերը, սակայն չի սահմանափակվում դրանցով. պատերազմ, ցույցեր, քաղաքացիական անկարգություններ, երկրաշարժ, հրդեհ, պայթյուններ, փոթորիկ, ջրհեղեղ կամ բնության այլ աղետներ, գործադուլներ, մասայական կրճատումներ, կամ արդյունաբերական այլ գործողություններ, բռնագրավումներ, կամ պետական գործակալությունների այլ գործողություններ:

17.2 Անհաղթահարելի ուժը չի ներառում (i) որևէ իրադարձություն, որի պատճառը Կողմերի կամ Կողմերի փորձագետների, ենթախորհրդատուների, գործակալների կամ աշխատակիցների դրսևորած անփութությունն է կամ կանխամտածված գործողությունները, (ii) որևէ իրադարձություն, որը պատասխանատու Կողմը կարող էր խելամտորեն հաշվի առնել սույն Պայմանագրի կնքման ժամանակ և եթե կարող էր խուսափել կամ հաղթահարել իր պարտականությունները կատարելու ընթացքում:

17.3 Անհաղթահարելի ուժը չի ներառում ֆինանսական միջոցների անբավարար լինելը կամ Պայմանագրով նախատեսված վճարումները ոչ պատշաճ կատարելը:

բ. Պայմանագիրը չխախտելու պայմաններ

17.4 Եթե որևէ Կողմ ձախողում է կատարել իր պարտականություններից որևիցե մեկը, ապա դա չի համարվի սույն Պայմանագրի խախտում, եթե այդ անկարողության պատճառը ֆորսմաժորային որևէ իրադարձություն է, եթե այդ իրադարձությունից տուժած Կողմը կատարել է բոլոր խելամիտ նախազգուշացումները, ցուցաբերել է զգուշություն և կիրառել է

այլընտրանքային եղանակներ՝ նպատակ ունենալով կատարել իր Պայմանագրային պարտավորությունները:

գ. Ձեռնարկվելիք միջոցներ

17.5 Ֆորս Մաժորից տուժած Կողմը պետք է շարունակի կատարել իր Պայմանագրային պարտականությունները, եթե գործնականում հնարավոր է, և պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ միջոցները Ֆորս Մաժորի հետևանքները նվազեցնելու համար:

17.6 Ֆորս Մաժորից տուժած Կողմը պետք է ծանուցի մյուս Կողմին Ֆորս Մաժորի մասին որքան հնարավոր է ծշուտ, բայցբոլոր դեպքերում ոչ ուշ քան պատահարից տասնչորս (14) օրացուցային օր հետո՝ տրամադրելով ապացույցներ աղետի բնույթի և պատճառների վերաբերյալ: Ինչպես նաև տուժած Կողմը պարտավոր է գրավոր ծանուցագիր ուղարկել նորմալ պայմանների վերականգնման վերաբերյալ որքան հնարավոր է շուտ:

17.7 Եթե որևէ Կողմ Ֆորս Մաժորի պատճառով Պայմանագրով սահմանված ժամկետում չի կարողացել կատարել իր Պայմանագրային պարտավորությունները կամ հանձնարարությունները, ապա կատարման ժամկետները պետք է երկարաձգել այն օրերի քանակով, որոնց ընթացքում այդ գործողությունների կատարումը անհնար է եղել:

17.8 Ֆորս Մաժորի պատճառով ծառայությունների մատուցման անհնարինության ժամկետի ընթացքում, համաձայն Պատվիրատուի հանձնարարականի, Խորհրդատուն պետք է, կամ.

(ա) ապամոբիլիզացնի իր ուժերը, ինչի դեպքում Ծառայությունները վերսկսելու համար նրա կողմից կատարված խելամիտ և անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը պետք է փոխահատուցվեն,

(բ) Խորհրդատուն պետք է շարունակի Ծառայությունների մատուցումը այնքան ժամանակ, որքան հնարավոր է, ինչի դեպքում Պատվիրատուն պետք է շարունակի վճարել Խորհրդատուին սույն Պայմանագրի դրույթների համաձայն և փոխհատուցի անհրաժեշտ և անհապաղ հավելյալ ծախսերը:

17.9 Ֆորս Մաժորի առկայության կամ ուժգնության պատճառով Կողմերի միջև ծագած անհամաձայնության

դեպքում վեճը պետք է լուծվի համաձայն ՊԸՊ-ի Հոդվածներ 48-ի և 49-ի:

18. Պայմանագրի կասեցումը

18.1. Պատվիրատուն կարող է գրավոր ծանուցմամբ Խորհրդատուին տեղեկացնել վճարումների կասեցման վերաբերյալ՝ ելնելով նշված պատճառներից. Խորհրդատուն ձախողել է կատարել սույն Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները, այդ թվում Ծառայությունների մատուցման մասով, այն պայմանով, որ նշված դադարեցման մասին ծանուցումը (i) պետք է նշի ձախողման բնույթը, և (ii) պետք է պահանջի Խորհրդատուից վերականգնել ձախողումը Խորհրդատուի կողմից նշված դադարեցման մասին ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) օրացուցային օրը չգերազանցող ժամանակահատվածում:

19. Պայմանագրի լուծում

19.1 Սույն Պայմանագիրը կարող է լուծվել յուրաքանչյուր Կողմի նախաձեռնությամբ՝ ստորև նշված դրույթներից ելնելով.

ա. Պատվիրատուի կողմից

19.1.1 Պատվիրատուն կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը, եթե սույն Հոդվածի պարագրաֆ (ա)-ից մինչև (զ)-ում նշված դեպքերում: (ա) –ից մինչև (դ) դեպքերում Պատվիրատուն պետք է Խորհրդատուին գրավոր ծանուցի Պայմանագրի դադարեցման մասին առնվազն երեսուն (30) օրացուցային օր առաջ, պարագրաֆ (ե)-ում նշված դեպքերում՝ առնվազն վաթսուն (60) օրացուցային օր առաջ, և պարագրաֆ (զ)-ում նշված դեպքերում՝ առնվազն հինգ (5) օրացուցային օր առաջ

(ա) Եթե Խորհրդատուն ձախողում է ուղղել Պայմանագրային պարտականությունների վերաբերյալ իր թերությունները, ինչպես նշված է պայմանագրի դադարեցման մասին Ծանուցագրում՝ համաձայն ՊԸՊ Հոդված 18-ի,

(բ) Եթե Խորհրդատուն (կամ նրա անդամներից մեկը, եթե Խորհրդատուն կազմակերպություն է) ճանաչվում է անվճարունակ կամ սնանկ կամ պարտքի ներման նպատակով իր պարտատերերի հետ գալիս է որևէ համաձայնության է, կամ օգտվում է որևէ օրենքից ի շահ պարտատերերի, կամ կամավոր կամ պարտադրված լուծարվում է կամ անցնում արտաքին կառավարման,

- (գ) Եթե Խորհրդատուն չի կատարել ՊԸՊ Հոդված 49.1-ով նախատեսված դատական կարգով կայացված որևէ վերջնական վճիռ:
- (դ) Եթե Անհաղթահարելի ուժի հետևանքով Խորհրդատուն ի վիճակի չէ կատարել Ծառայությունների նյութական մասը 60 օրացուցային օրից ոչ պակաս տևող ժամկետում:
- (ե) Եթե Պատվիրատուն իր հայեցողությամբ և ցանկացած պատճառով որոշում է դադարեցնել սույն Պայմանագիրը:

(զ) Եթե Խորհրդատուն չի հաստատում Հիմնական փորձագետների հասանելիությունը, ինչպես պահանջվում է ՊՀՊ-ի հոդված 13-ով:

19.1.2 Ավելին, եթե Պատվիրատուն հայտնաբերել է, որ Խորհրդատուն ներգրավված է կոռուպցիոն, կեղծարարական, հանցավոր, ստիպողական գործունեության մեջ՝ սույն Պայմանագիրը կատարելիս կամ նրա համար մրցակցելիս, ապա Պատվիրատուն կարող է Խորհրդատուին գրավոր ծանուցում տալուց տասնչորս (14) օրացուցային օրից հետո դադարեցնել Խորհրդատուի գործունեությունը Պայմանագրի ներքո:

բ. Խորհրդատուի կողմից

19.1.3 Խորհրդատուն կարող է դադարեցնել Պայմանագիրը ՊԸՊ-ի պարագրաֆ (ա)-ից մինչև (դ)-ում ներկայացված դեպքերում՝ այդ մասին ոչ պակաս քան 30 օրացուցային օր առաջ գրավոր ծանուցագիր ուղարկելով Պատվիրատուին:

(ա) Եթե Պատվիրատուն Խորհրդատուի՝ գրավոր ծանուցագիրն ուղարկելուց քառասունհինգ օրացուցային օրվա (45) ընթացքում չի վճարում Խորհրդատուին Պայմանագրով վճարման ենթակա գումարները, և խնդիրը ենթակա չէ լուծման վեճերի խորհրդի կողմից՝ համաձայն ՊԸՊ Հոդված 49.1-ի:,::

(բ) Եթե Խորհրդատուն Անհաղթահարելի ուժի հետևանքով ի վիճակի չէ մատուցել Ծառայությունների նյութական մասը ոչ պակաս, քան վաթսույն (60) օրացուցային օր ժամանակահատվածում:

- (գ) Եթե Պատվիրատուն չի կատարել ՊԸՊ Հոդված 49.1-ով նախատեսված դատական կարգով կայացված որևէ վերջնական վճիռ:
- (դ) Եթե Պատվիրատուն էականորեն խախտել է Պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները և չի հաջողում վերացնել դրանք խախտման մասին Խորհրդատուի ծանուցագիրը ստանալուց քառասունհինգ (45) օրվա ընթացքում (կամ դրա ավարտից հետո Խորհրդատուի կողմից գրավոր կերպով տրված հավելյալ ժամկետի ընթացքում):

գ. Իրավունքների և պարտականությունների կասեցումը

19.1.4 Սույն Պայմանագրի՝ համաձայն ՊԸՊ Հոդված 12-ի կամ 19-ի դադարեցումից ի վեր, , կամ սույն Պայմանագրի՝ համաձայն ՊԸՊ Հոդված 14-ի ժամկետի լրացումից ի վեր, , Կողմերի բոլոր իրավունքներն ու պարտականությունները դադարում են, բացառությամբ (i) այն իրավունքների և պարտականությունների, որոնք կարող են ի հայտ գալ Պայմանագրի դադարեցման կամ դրա ժամկետը լրանալու օրը, (ii) ՊԸՊ Հոդված 22-ում ամրագրված գաղտնիությունը պահելու պարտականության, (iii) Խորհրդատուի՝ իր նկատմամբ ստուգումներ կատարելը, հաշիվներն ու հաշվառումները պատճենահանելն ու աուդիտի ենթարկելը թույլատրելու պարտականության՝ համաձայն ՊԸՊ Հոդված 25-ի, և (iv) ցանկացած իրավունք, որը Կողմերից յուրաքանչյուրը կարող է ունենալ ըստ Գործող Օրենսդրության:

դ. Ծառայությունների դադարեցումը

19.1.5 Համաձայն ՊԸՊ Հոդված 19ա-ի կամ 19բ-ի սույն Պայմանագիրը դադարեցնելու մասին մի Կողմից մյուսին ուղարկված ծանուցագիրը ստանալուց հետո, Խորհրդատուն պետք է այդպիսի ծանուցագիր ուղարկելուց/ստանալուց անմիջապես հետո ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը Ծառայությունները դադարեցնելու համար պատշաճ վիճակի բերելու համար, ինչպես նաև գործադրի բոլոր հնարավոր ջանքերը դրա համար պահանջվող ծախսերը նվազագույնի հասցնելու համար: Ինչ վերաբերում է Խորհրդատուի կողմից կազմված փաստաթղթերին և Պատվիրատուի կողմից տրամադրված սարքավորումներին և նյութերին՝ Խորհրդատուն պետք է գործի համաձայն ՊԸՊ Հոդվածներ 27-ի և 28-ի:

ե. Վճարումը լուծման պահին

19.1.6 Մինչ սույն Պայմանագիրը լուծելը Պատվիրատուն պարտավոր է Խորհրդատուին վճարել:

- (ա) մինչ Պայմանագիրը լուծելը Խորհրդատուի կողմից պատշաճ որակով մատուցված Ծառայությունների համար, ինչպես նաև մինչ Պայմանագիրը լուծելը կատարված այլ ծախսերը, նախնական վճարված գումարներն ու պայմանական ծախսերը՝ համաձայն ՊԸՊ Հոդված 42-ի:
- (բ) եթե Պայմանագիրը լուծվել է համաձայն ՊԸՊ Հոդված 19.1-ի (դ)-ից (ե) կետերի, այն ծախսերը, որոնք առաջացել են Պայմանագրի՝ ըստ նախատեսվածի և պատշաճ լուծման հետևանքով, ներառյալ Փորձագետների վերադարձի ճանապահաձախսը:

Գ. Խորհրդատուի պարտականությունները

20. Ընդհանուր

ա. Աշխատանքի կատարման ստանդարտներ

20.1 Խորհրդատուն պարտավոր է Ծառայությունները մատուցել պատշաճ ջանասիրությամբ, արդյունավետությամբ և խնայողությամբ՝ համաձայն համընդհանուր մասնագիտական չափանիշների և փորձի, ինչպես նաև պահպանել կառավարման բարձր որակը, կիրառել պատշաճ տեխնոլոգիաներ և անվտանգ ու արդյունավետ սարքավորումներ, նյութեր և մեթոդներ: Սույն Պայմանագրի Ծառայությունների առնչությամբ Խորհրդատուն պարտավոր է Պատվիրատուի համար միշտ գործել որպես վստահելի Խորհրդատու, պարտավոր է միշտ աջակցել ու պահպանել Պատվիրատուի օրինական շահերը երրորդ կողմի հետ ցանկացած հարցում:

20.2 Խորհրդատուն պետք է վարձի և տրամադրի որակավորված և փորձառու Փորձագետներ և ենթախորհրդատուներ, ինչպես պահանջվում է Ծառայությունների մատուցման համար:

20.3 Խորհրդատուն կարող է Ծառայությունների մի մասը իրականացնելու համար Պատվիրատուի համաձայնությամբ ներգրավել ենթախորհրդատուների և հիմնական փորձագետների, սակայն, այնուամենայնիվ, Խորհրդատուն պատասխանատու է մնում Ծառայությունների ողջ ծավալի համար:

բ. Ծառայությունները կարգավորող օրենսդրություն

20.4 Խորհրդատուն պետք է Ծառայությունները մատուցի համաձայն Պայմանագրի և Գործող Օրենսդրության և պետք է ապահովի, որ ենթախորհրդատուները և Փորձագետները նույնպես հետամուտ լինեն Գործող Օրենսդրությանը:

20.5 Պայմանագրի իրականացման ընթացքում Խորհրդատուն պետք է հետամուտ լինի Պատվիրատուի երկրում գործող՝ ապրանքների ներմուծումը և ծառայությունների մատուցումը արգելող նորմերին, երբ՝

(ա) օրենքի կամ պաշտոնական կանոնակարգերի համաձայն [the Borrower’s/Beneficiary’s] երկիրը արգելում է առևտրային հարաբերություններ տվյալ երկրի հետ, կամ

(բ) ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի ներքո Անվտանգության խորհրդի կողմից ընդունված որոշման համապատասխանության ակտով, Վարկառուի երկիրը արգելում է տվյալ երկրից որևէ ապրանքի ներմուծում կամ տվյալ երկրում որևէ անձի կամ միավորմանը վճարում:

20.6 Պատվիրատուն պետք է Խորհրդատուին գրավոր ծանուցմամբ հայտնի համապատասխան տեղական նորմերի մասին, իսկ Խորհրդատուն, սույն ծանուցումը ստանալուց հետո, պետք է հարգի դրանք:

21. Շահերի բախում

21.1 Խորհրդատուն պետք է Պատվիրատուի շահերը առաջնային համարի առանց հաշվի առնելու հետագա աշխատանքները և խուսափի այլ հանձնարարությունների վերաբերյալ կոնֆլիկտներ ունենալուց և նրանց սեփական կորպորատիվ շահերի հետ բախումից:

ա. Խորհրդատուն չպետք է օգտվի միջնորդավճարներից, զեղչերից և այլն

21.1.1 Համաձայն ՊԸՊ Զ Հոդված 41-ի մինչև 46, Խորհրդատուի միակ վճարումը համարվում է այն գումարը, որը Խորհրդատուին վճարվելու է սույն Պայմանագրի շրջանակներում, և ըստ ՊԸՊ Հոդված 21.1.3-ի, Խորհրդատուն իր շահերից ելնելով չպետք է ընդունի որևէ զեղչ կամ նմանատիպ վճարում իր գործունեության հետ կապված համաձայն սույն Պայմանագրի կամ դրա հաշվին իր պարտականությունները կատարի: Խորհրդատուն պարտավոր է լավագույնս ջանքեր գործադրել, որպեսզի ենթախորհրդատուները, փորձագետները և նրանց գործակալները նույնպես չընդունեն նմանատիպ հավելյալ դրամական վարձատրություններ:

21.1.2 Ավելին, եթե Խորհրդատուն, որպես ծառայությունների մի մաս պարտավոր է Պատվիրատուին առաջարկել որոշակի ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ձեռքբերում, ապա Խորհրդատուն պետք է հետամուտ լինի Բանկի կիրառելի ուղեցույցին, և միշտ պետք է գործի՝ ելնելով Պատվիրատուի շահերից: Գնումների

կատարման ընթացքում Խորհրդատուի կողմից ցանկացած զեղչ կամ միջնորդավճարն ընդունելու արդյունքում գոյացած ցանկացած միջոց պետք է փոխանցվի Պատվիրատուի հաշվին:

բ. Որոշ գործողություններ, որտեղ Խորհրդատուները և մասնաճյուղերն իրավունք չունեն ներգրավվել

21.1.3 Խորհրդատուն համաձայնում է, որ սույն Պայմանագրի գործողության ընթացքում և դրա ավարտից հետո, ինքը կամ իր որևէ մասնաճյուղ, ինչպես նաև այլ ենթախորհրդատու և վերջինիս որևէ մասնաճյուղ չպետք է այնպիսի ապրանքներ մատակարարի, աշխատանքներ և ոչ-խորհրդատվական ծառայություններ մատուցի, որոնք անմիջականորեն առնչվում են Խորհրդատուի կողմից Ծրագրի պատրաստման կամ իրականացման համար մատուցվելիք Ծառայություններին կամ բխում են դրանցից, եթե այլ բան նախատեսված չէ ՊՀՊ-ով:

գ. Շահերի բախում առաջացնող գործողությունների անթույլատրելիություն

21.1.4 Խորհրդատուն չպետք է ներգրավվի, ինչպես նաև պետք է հետամուտ լինի որպեսզի իր փորձագետները, ենթախորհրդատուները, լինի ուղղակի կերպով թեանուղղակիորեն, չներգրավվեն ցանկացած այլ ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեություն մեջ, որը կարող է հակասել Պայմանագրով իրենց հանձնարարված աշխատանքներին:

դ. Խիստ պարտավորություն բացահայտել շահերի բախում առաջացնող գործողություններ

21.1.5 Խորհրդատուն պարտավոր է բացահայտել, ինչպես նաև ապահովել, որ իր Փորձագետներն ու ենթախորհրդատուները բացահայտեն իրական կամ հավանական շահերի բախման ցանկացած իրավիճակ, որը կարող է ազդել նրանց՝ Պատվիրատուի շահերից գործելու կարողությունների վրա կամ, որը ողջամտորեն կարող է ունենալ նման ազդեցություն: Այդպիսի իրավիճակների չբացահայտումը կարող է հանգեցնել Խորհրդատուի որակագրկման կամ Պայմանագրի լուծման:

22. Գաղտնիություն

22.1 Խորհրդատուն և փորձագետները չպետք է երբևէ որևէ անձի կամ կազմակերպության փոխանցեն ցանկացած գաղտնի տեղեկատվություն, լ որի մասին տեղեկացել են Ծառայությունների մատուցման ընթացքում, ինչպես նաև չպետք է հրապարակային դարձնեն Ծառայությունների մատուցման ընթացքում կամ դրա արդյունքում ձևավորված ցանկացած առաջարկություն բացառությամբ այն դեպքերի, երբ գոյություն ունի Պատվիրատուի հետ նախապես պատրաստված գրավոր համաձայնություն:

23. Խորհրդատուի պարտավորությունները

23.1 ՊՀՊ-ով սահմանված լրացուցիչ դրույթների համաձայն, առկայության դեպքում, սույն Պայմանագրի ներքո Խորհրդատուի պարտավորությունները պետք է սահմանվեն Գործող օրենսդրությամբ:

24. Խորհրդատուի կողմից կատարվելիք ապահովագրություն

24.1 Խորհրդատուն (i) պետք է ձեռնարկի և ունենա, ինչպես նաև պահանջի բոլոր ենթախորհրդատուներից իր հաշվին (կամ ենթախորհրդատուի հաշվին, ինչպես կոնկրետ դեպքը պահանջի) և Պատվիրատուի կողմից հաստատված պայմաններով ձեռնարկել և ունենալ ռիսկերի դեմ ապահովագրություն՝ համաձայն ՊՀՊ-ում նշված պայմանների, ինչպես նաև (ii) Պատվիրատուի պահանջով ապացույցներ տրամադրի Պատվիրատուին, որ պահանջվող ապահովագրությունները ներկայացված են և գործում են, և, որ ընթացիկ ապահովագրավճարները կատարված են: Խորհրդատուն պետք է ապահովի, որ նշված ապահովագրությունները առկա լինեն նախքան Ծառայությունների մեկնարկը, ինչպես որ սահմանված է ՊՀՊ Հոդված 13-ով:

25. Հաշվապահություն, ստուգումներ և աուդիտ

25.1 Խորհրդատուն պետք է վարի և ողջամիտ ջանքեր գործադրի, որպեսզի իր ենթախորհրդատուները վարեն Ծառայությունների վերաբերյալ ճշգրիտ և պարբերական հաշվառում և գրանցումներ այնպիսի ձևով ու մանրամասներով, որը թույլ կտա հստակ տեսնել ժամանակային և ծախսային փոփոխությունները:

25.2. Խորհրդատուն պետք է թույլ տա և պահանջի, որ իր ենթախորհրդատուները թույլ տան Բանկին և/կամ Բանկի կողմից նշանակված անձանց ստուգել շինհրապարակը և բոլոր հաշիվները ու գրառումները, որոնք առնչվում են Պայմանագրի իրականացմանը և ծառայություններ մատուցելու առաջարկի ներկայացմանը, ինչպես նաև Բանկի կողմից նշանակված աուդիտորի կողմից աուդիտի ենթարկել նշված հաշիվները կամ գրառումները, ըստ Բանկի պահանջի: Խորհրդատուի ուշադրությանն է ներկայացվում ՊՀՊ-ի Հոդված 10-ը, որտեղ նշվում է, որ, ի թիվս այլոց, այն գործողությունները, որոնք նպատակաուղղված են նյութապես խոչընդոտելու Բանկի ստուգումներին և աուդիտի իրավունքներին, և որոնք սահմանված են սույն ՊՀՊ Հոդված 25.2-ով, հանդիսանում են արգելված գործողություններ, և կարող են հանգեցնել պայմանագրի լուծման (ինչպես նաև Խորհրդատուի որակագրկման Բանկի գերակշռող պատժամիջոցների ընթացակարգերի ներքո):

26. Պարտավորություններ հաշվետվությունների վերաբերյալ

26.1 Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի Հավելված Ա-ում թվարկված հաշվետվություններն ու փաստաթղթերը Հավելված Ա-ում նշված ձևով, քանակով և ժամկետներում:

27. Պատվիրատուի սեփականության իրավունքները հաշվետվությունների և գրառումների նկատմամբ

27.1 Եթե այլ բան նախատեսված չէ ՊՀՊ-ով, բոլոր հաշվետվությունները և համապատասխան տվյալները, ինչպիսին են քարտեզները, գծագրերը, տվյալների բազաները, այլ փաստաթղթերն ու համակարգչային ծրագրերը, օժանդակ նշումներն ու նյութերը, որոնք պատրաստվել կամ կազմվել են Խորհրդատուի կողմից Պատվիրատուի համար Ծառայությունների մատուցման ընթացքում, պետք է լինեն գաղտնի և հանդիսանան ու մնան Պատվիրատուի բացարձակ սեփականությունը: Խորհրդատուն պետք է մինչ սույն Պայմանագիրը լուծելը կամ դրա ժամկետի լրանալը Պատվիրատուին տրամադրի այդ բոլոր փաստաթղթերը՝ հաշվառման մանրամասներով: Խորհրդատուն կարող է պահել նշված փաստաթղթերի, տվյալների և/կամ համակարգչային ծրագրերի պատճենները, սակայն չպետք է դրանք կիրառի Պայմանագրին չառնչվող նպատակների համար առանց Պատվիրատուի կողմից տրված նախնական գրավոր հաստատման:

27.2 Եթե հարկավոր է լիցենզիա Խորհրդատուի և երրորդ կողմերի միջև հատակագծերի, գծագրերի, մասնագրերի, նախագծերի, տվյալների բազաների, այլ փաստաթղթերի կամ համակարգչային ծրագրերի մշակման համար, ապա Խորհրդատուն դրա համար պետք է ստանա Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությունը, իսկ Պատվիրատուն կարող է իր հայեցողությամբ պահանջել վճարել սույն ծրագրերի մշակման հետ կապված ծախսերը: Նշված փաստաթղթերի և համակարգչային ծրագրերի հետագա օգտագործման վերաբերյալ այլ սահմանափակումները, առկայության դեպքում, պետք է նշվեն ՊՀՊ-ում:

28. Սարքավորումներ, մեքենաներ և նյութեր

28.1 Այն սարքավորումները, մեքենաներն ու նյութերը, որոնք Խորհրդատուին է տրամադրել Պատվիրատուն, կամ որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն գնվել են Պատվիրատուի հաշվին, հանդիսանում են Պատվիրատուի սեփականությունը և պետք է համապատասխան ձևով նշվեն: Պայմանագրի լուծման կամ ժամկետը լրանալու պահից Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի սարքավորումների, մեքենաների և նյութերի գույքագրումը, և պետք է դրանք վերադարձնի՝ համաձայն Պատվիրատուի ցուցումների: Սույն սարքավորումները, մեքենաները և նյութերն օգտագործելիս, Խորհրդատուն, եթե Պատվիրատուից այլ գրավոր հանձնարարություն չի ստացել,

պետք է ապահովագրի դրանք Պատվիրատուի հաշվին դրանց տեղափոխման ողջ արժեքի չափով:

28.2 Խորհրդատուի և նրա Փորձագետների կողմից Պատվիրատուի երկիր բերված սարքավորումներն ու նյութերը, որոնք օգտագործվել են Ծրագրի կամ անձնական նպատակներով, հանդիսանում են Խորհրդատուի կամ նրա Փորձագետների սեփականությունը:

Դ. Խորհրդատուի փորձագետները և ենթախորհրդատուները

29. Հիմնական փորձագետների նկարագրությունը

29.1 Յուրաքանչյուր Հիմնական փորձագետի պաշտոնը, համաձայնեցված կատարվելիք աշխատանքի նկարագրությունը, պահանջվող նվազագույն որակավորումը և Ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ հաշվարկված ժամանակային ներգրավվածությունը սահմանված է Հավելված Բ-ով:

29.2 Եթե անհրաժեշտ է համապատասխանել ՊԸՊ Հոդված 20ա-ի դրույթներին, ապա Խորհրդատուն կարող է կատարել ճշգրտումներ Հավելված Բ-ում ներկայացված Հիմնական փորձագետների հաշվարկված ներգրավվածության մեջ՝ գրավոր ծանուցելով Պատվիրատուին, այն պայմանով, որ (i) նշված ճշգրտումները չեն փոփոխի ցանկացած անհատի նախնական հաշվարկված ներգրավվածությունը ավելի քան 10%-ով կամ մեկ շաբաթով, որը որ ավելի երկար է, և (ii) որ նշված ճշգրտումների հանրագումարը չի գերազանցի ՊԸՊ Հոդված 41.2-ում սահմանված առավելագույն գումարին:

29.3 Եթե հավելված Ա-ում սահմանված Ծառայությունների շրջանակից դուրս լրացուցիչ աշխատանք է պահանջվում, ապա Հիմնական փորձագետների համար հաշվարկված ներգրավվածությունը կարող է ավելացվել Պատվիրատուի և Խորհրդատուի միջև գրավոր համաձայնության հիման վրա: Այն դեպքում, երբ սույն Պայմանագրի ներքո վճարումները գերազանցում են ՊԸՊ Հոդված 41.1-ում սահմանված առավելագույն գումարը, Կողմերը պետք է ստորագրեն Պայմանագրի փոփոխություն:

30. Հիմնական փորձագետների փոխարինում

30.1 Բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն գրավոր համաձայնություն տա այլ բանի, որևէ Հիմնական փորձագետ չպետք է փոփոխվի:

30.2 Չնայած վերոգրյալին՝ Պայմանագրի իրականացման ընթացքում Հիմնական փորձագետների փորարինումը կարող է դիտարկվել միայն հիմք ընդունելով Խորհրդատուի գրավոր դիմումը և ելնելով Խորհրդատուի ողջամիտ հսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից, ներառյալ, սակայն չսահմանափակվելով մահվան կամ անաշխատունակության դեպքերով: Նման դեպքերում, Խորհրդատուն պետք է անմիջապես ապահովի նոր՝ այնպիսի մասնագետի ներգրավումը, ով ունի ավելի բարձր կամ համարժեք որակավորում ու փորձ, սակայն վարձատրության նույն դրույքաչափով:

31. Լրացուցիչ Հիմնական փորձագետների հաստատումը

31.1 Եթե Պայմանագրի իրականացման ընթացքում Ծառայությունների իրականացման համար պահանջվում են լրացուցիչ Հիմնական փորձագետներ, Խորհրդատուն պետք է Պատվիրատուի վերանայմանն ու հաստատմանը ներկայացնի նրանց ինքնակենսագրականների օրինակները: Եթե Պատվիրատուն գրավոր չի առարկում (նշելով առարկման պատճառները), ապա նշված ինքնակենսագրականների ստացումից հետո 22 (քսաներկու) օրվա ընթացքում լրացուցիչ Հիմնական փորձագետները ենթադրվում են հաստատված Պատվիրատուի կողմից:

32. Փորձագետների կամ ենթախորհրդա- տուների հեռացում

32.1 Եթե Պատվիրատուն հայտնաբերում է, որ որևէ Փորձագետ կամ ենթախորհրդատու լուրջ սխալներ է գործել կամ մեղադրվում է հանցավոր գործունեության մեջ, կամ եթե Պատվիրատուն որոշում է, որ Խորհրդատուի Փորձագետը կամ ենթախորհրդատուն Ծառայությունների իրականացման ընթացքում ներգրավված են եղել կոռուպցիոն, խարդախ կամ հանցավոր գործունեության մեջ, ապա Խորհրդատուն պետք է Պատվիրատուի գրավոր պահանջով փոխարինի այդ մասնագետներին:

32.2 Եթե Պատվիրատուն գտնի, որ Հիմնական փորձագետները, ոչ հիմնական փորձագետները կամ ենթախորհրդատուները ոչ կոմպետենտ են, կամ ի վիճակի չլին կատարել իրենց հանձնարարված աշխատանքները, ապա Պատվիրատուն, հիմնավորումներ ներկայացնելով, կարող է պահանջել Խորհրդատուից, որպեսզի վերջինս փոխարինի այդ անդամին:

32.3 Հեռացված ցանկացած փորձագետի կամ ենթախորհրդատուի փոխարինողը պետք է ունենա ավելի լավ որակավորում ու փորձ և պետք է ընդունելի լինի Պատվիրատուի համար:

33.Փորձագետների փոխարինում/հեռացում – Ազդեցություն վճարումների վրա

33.1 Բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն այլ բան է ընդունում, (i) Խորհրդատուն պետք է կրի բոլոր լրացուցիչ ճանապարհածախսերը կամ այլ ծախսերը, որոնք ի հայտ են գալիս որևէ հեռացման կամ փոխարինման պատճառով, և (ii) փոխարինող Փորձագետի վարձատրությունը չպետք է գերազանցի փոխարինված կամ հեռացված փորձագետի վարձատրությանը:

34. Աշխատանքային ժամեր, արտաժամյա աշխատանք, աշխատանքից ազատում և այլն

34.1 Հավելված Բ-ում ներկայացված են փորձագետների աշխատանքային ժամերն ու արձակուրդները: Ծառայությունների մատուցման հետ կապված փորձագետների աշխատանքները պետք է համարվեն սկսված Պատվիրատուի երկիր ժամանելուց ի վեր և ավարտված այնտեղից մեկնելուց հետո, Հավելված Բ-ում նշված օրերի ընթացքում՝ չներառելով դեպի Պատվիրատուի երկիր և երկրից մեկնելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

34.2 Փորձագետներին արտաժամյա աշխատանքի կամ հիվանդ օրերի համար արձակուրդային չի վճարվելու, բացառությամբ Հավելված Բ-ում նշված դեպքերի, և ենթադրվում է, որ Խորհրդատուի վարձատրությունը ծածկում է վերոնշյալ դեպքերը:

34.3 Հիմնական փորձագետների արձակուրդը ենթակա է Խորհրդատուի կողմից նախնական հաստատման , ով պետք է ապահովի, որպեսզի փորձագետի բացակայությունը չհետաձգի ծրագրի առաջընթացը և չազդի Ծառայությունների պատշաճ վերահսկողության վրա:

Ե. Պատվիրատուի Պարտականությունները

35.Աջակցություն և արտոնություններ

35.1 Եթե ՊՀՊ-ով այլ բան սահմանված չէ, ապա Պատվիրատուն պետք է լավագույնս օգտագործի իր ջանքերը, որպեսզի.

(ա) Խորհրդատուին աջակցի ձեռք բերել աշխատանքի իրավունք և Ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

(բ) Խորհրդատուին աջակցի նրա փորձագետների համար, և եթե հարկավոր է, նրանց ընտանիքի անդամների համար, մուտքի և ելքի թույլտվության, կացության թույլտվությունների, փոխանակման թույլտվությունների և Պատվիրատուի երկրում բնակվելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձեռքբերման հարցերում Պայմանագրի ներքո Ծառայությունների իրականացման ընթացքում:

- (գ) Ապահովի Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ որևէ գույքի ներկրման մաքսազերծման հեշտացումն ու փորձագետների ու նրանց ընտանիքի անդամների գույքի մաքսազերծման հեշտացումը:
- (դ) Ապահովի Ծառայությունների արագ և արդյունավետ մատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի և հրահանգների ներկայացումը Կառավարության պաշտոնյաներին, գործակալներին, և ներկայացուցիչներին::
- (ե) Աջակցի Ծառայությունները մատուցելու համար վարձված Խորհրդատուին, նրա փորձագետներին և ենթախորհրդատուին ազատվել համաձայն Պատվիրատուի երկրում Գործող Օրենսդրության գրանցվելու որևէ պահանջից կամ նրա պրոֆեսիոնալ գործունեությունը ծավալելու համար անհրաժեշտ թույլտվություն ձեռք բերելուց կամ որպես անհատ կամ ընկերություն՝ Պատվիրատուի երկրում գործունեություն ծավալելու թույլտվություն ստանալուց:
- (զ) Խորհրդատուին, որևէ ենթախորհրդատուի և նրանց Փորձագետներին տրամադրել արտոնություններ, համաձայն Գործող Օրենսդրության, Ծառայությունների մատուցման նպատակով կամ իրենց և իրենց ընտանիքների անդամների անձնական օգտագործման համար Պատվիրատուի երկիր խելամիտ քանակի արտարժույթ բերելու համար, ինչպես նաև թույլատրել իրենց հետ դուրս հանել գումարներ, որոնք Աշխատակազմը վաստակել է Ծառայությունները մատուցելիս:
- (է) Խորհրդատուին տրամադրել ցանկացած այլ տեսակի աջակցություն, ինչպես կարող է սահմանվել ՊՀՊ-ով:

36. Ծրագրի շինհրապարակ մուտք գործելու թույլատվություն

36.1 Պատվիրատուն երաշխավորում է, որ Խորհրդատուն կունենա Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ հնարավորություն՝ շինհրապարակներ անվճար, անարգել մուտք գործելու: Պատվիրատուն պատասխանատու է ծրագրի շինհրապարակին կամ գույքին հասցված ցանկացած վնասի համար, որը ծագել է Խորհրդատուի մուտքի հետևանքով և պետք է փոխհատուցի Խորհրդատուին, ենթախորհրդատուին կամ փորձագետներին ցանկացած այդպիսի վնասի դիմաց բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վնասները հասցվել են Խորհրդատուի, ենթախորհրդատուի կամ փորձագետների կանխամտածված գործողությունների կամ անտարբերության հետևանքով:

37. Հարկերի և տուրքերի մասին գործող Օրենսդրության փոփոխություն

37.1 Եթե սույն Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունենա հարկերի և տուրքերի մասին Պատվիրատուի երկրի Գործող օրենսդրության փոփոխություն, որի արդյունքում տեղի ունենա Խորհրդատուի՝ Ծառայությունները մատուցելու ծախսերի աճ կամ նվազում, ապա սույն Պայմանագրով նախատեսված աշխատավարձերը և փոխհատուցելի ծախսերը կաճեն կամ կնվազեն համապատասխանաբար՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով, ինչպես նաև համապատասխանաբար կփոփոխվեն ՊԸՊ Հոդված 41-ում նշված առավելագույն գումարները:

38. Պատվիրատուի Ծառայություններ, գրասենյակային պայմաններ և գույք

38.1 Պատվիրատուն պետք է Խորհրդատուին և փորձագետներին, Ծառայություններ մատուցելու համար անվճար տրամադրի ծառայություններ, գրասենյակային պարագաներ և գույք, տրված Տեխնիկական առաջադրանքում (Հավելված Ա)՝ նույն Հավելվածում նշված ժամկետներում և ձևով:

38.2 Եթե այդ Ծառայությունները, գրասենյակային պարագաները և գույքը չեն տրամադրվում Խորհրդատուին, ինչպես նշված է Հավելված Զ-ում, ապա Կողմերը պետք է պայմանավորվեն. (i) Խորհրդատուին հավելյալ ժամանակ տրամադրելու մասին, որը Ծառայությունները մատուցելու համար բավարարի կլինի, (ii) թե ինչպես է Խորհրդատուն կատարելու ծառայությունների, գրասենյակային պարագաների և սարքավորումների գնումներն այլ աղբյուրներից, և (iii) Խորհրդատուին տրվելիք հավելյալ վճարումների մասին, եթե այդպիսիք առաջանում են՝ համաձայն ՊԸՊ Հոդված 43.1-ի:

39. Պատվիրատուի աշխատակազմը

39.1 Պատվիրատուն պետք է Խորհրդատուին անվճար տրամադրի արհեստավարժ և աջակից աշխատակազմ, եթե այդպես սահմանված է Հավելված Ա-ով, որը կնշանակվի Պատվիրատուի կողմից, Խորհրդատուի խորհուրդով:

39.2 Եթե Պատվիրատուն Խորհրդատուին չի տրամադրում տեղացի Աշխատակազմ Հավելված Ա-ում նշված ձևով և ժամկետում, Պատվիրատուն և Խորհրդատուն պետք է համաձայնության գան հետևյալի մասին. (i) ինչպես պետք է հատուցել Ծառայությունների տուժած մասը, և (ii) դրա արդյունքում Պատվիրատուի կողմից Խորհրդատուին կատարելիք հավելյալ վճարումները, եթե այդպիսիք կան, համաձայն ՊԸՊ Հոդված 41.3-ի:

39.3 Պատվիրատուի արհեստավարժ և աջակից աշխատակազմը, բացառությամբ Պատվիրատուի հետ կապը ապահովող աշխատակիցների, պետք է աշխատի բացառապես Խորհրդատուի ղեկավարությամբ: Եթե Պատվիրատուի աշխատակազմի որևէ անդամ ձախողում է Խորհրդատուի կողմից իրեն հանձնարարված և իր զբաղեցրած պաշտոնին համապատասխան աշխատանքը կատարել պատշաճ կերպով, ապա Խորհրդատուն կարող է պահանջել, որպեսզի տվյալ աշխատակիցը փոխարինվի, և Պատվիրատուն անպատճառ չպետք է մերժի սույն պահանջի կատարումը:

40. Վճարում

40.1 Սույն Պայմանագրի ներքո մատուցած Ծառայությունների դիմաց Պատվիրատուն պետք է վճարի Խորհրդատուին ինչպես նշված է ՊԸՊ Զ-ում:

2. Վճարումներ Խորհրդատուին

41. Առավելագույն գումար

41.1 Ծառայությունների համար հաշվարկը ներկայացված է Հավելված Գ-ում (Վարձատրություն) և Հավելված Դ-ում (Այլ ծախսեր, պայմանական գումարներ և չնախատեսված գումարներ):

41.2 Սույն Պայմանագրով կատարվելիք վճարումները չպետք է գերազանցեն ՊՀՊ-ում սահմանված տեղական և արտասահմանյան արժույթներով առավելագույն վճարի գումարը:

41.3 ՊԸՊ 41.2-ում նշված առավելագույն գումարը գերազանցող ցանկացած վճարման համար Կողմերը պետք է Պայմանագրի փոփոխություն ստորագրեն՝ հղում անելով սույն Պայմանագրի այն դրույթին, որը ենթադրում է նման փոփոխություն:

42. Վարձատրություն և այլ ծախսեր, պայմանական գումարներ և չնախատեսված գումարներ

42.1 Պատվիրատուն Խորհրդատուին պետք է վճարի (i) աշխատավարձ, որը պետք է սահմանվի ըստ Ծառայությունները կատարելու համար յուրաքանչյուր Փորձագետի ծախսած ժամանակի՝ Ծառայությունների մատուցման մեկնարկի ամսաթվից հետո կամ որևէ այլ ամսաթվից հետո, որի մասին Կողմերը կպայմանավորվեն գրավոր ձևով; և (ii) այլ ծախսեր, պայմանական գումարներ և չնախատեսված ծախսերի գումարներ, որոնք փաստացի և խելամտորեն կատարվել են Խորհրդատուի կողմից Ծառայությունների մատուցման համար:

42.2 Բոլոր վճարումները պետք է կատարվեն Հավելվածներ Գ-ում և Դ-ում սահմանված դրույքաչափերով:

42.3 Եթե ՊՀՊ-ը չի սահմանում վարձատրության դրույքաչափերի գնային ճշգրտում, ապա նշված վարձատրությունը ֆիքսված է լինելու Պայմանագրի ողջ ընթացքի համար:

42.4 Վարձատրության չափը պետք է ծածկի. (i) աշխատավարձ և վարձավճարներ, որոնք Խորհրդատուն համաձայնել է վճարել փորձագետներին, ինչպես նաև սոցիալական վճարներ և հավելյալ ծախսեր (օրինակ վարձակալած բնակարանի վարձ) (բոնուսները կամ շահույթի այլ տեսակներ ապահովող վճարումները չեն համարվում հավելյալ ծախսերի տարրեր), (ii) Հավելված Բ-ի ցուցակում չընդգրկված փորձագետների կողմից տրամադրված աջակցության ծախսերը, (iii) Խորհրդատուի շահույթը, և (iv) ՊՀՊ-ներում սահմանված ցանկացած այլ ծախսեր:

42.5 Փորձագետների դեռ չնշանակված անդամի համար նախատեսված ցանկացած դրույքաչափ ենթակա է վերանայման՝ Պատվիրատուի գրավոր համաձայնագրի առկայության դեպքում, այն ժամանակ, երբ կիրառելի վարձատրության չափերը և այլ վճարումները հայտնի դառնան:

43. Հարկեր և տուրքեր

43.1 Խորհրդատուն, ենթախորհրդատուն և փորձագետները պատասխանատու են Պայմանագրից բխող ցանկացած հարկային պարտավորությունների համար, եթե այլ բան նախատեսված չէ ՊՀՊ-ով:

43.2 Որպես վերոնշյալի բացառություն և ինչպես նշված է ՊՀՊ-ում, բոլոր տեղական անուղղակի հարկերը (վերջնականացվում են Պայմանագրի բանակցությունների ընթացքում) փոխհատուցվում են Խորհրդատուին կամ վճարվում են Պատվիրատուի կողմից Խորհրդատուի անունից:

44. Վճարումների արժույթը

44.1 Սույն Պայմանագրի ներքո ցանկացած վճարում պետք է կատարվի այն արժույթով(արժույթներով), որը նշված է ՊՀՊ-ում:

45. Հաշիվների ներկայացման և վճարման եղանակները

45.1 Ծառայությունների վերաբերյալ ներկայացված հաշիվները և վճարումները պետք է կատարվեն հետևյալ կերպ.

(ա) Կանխավճար: Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո ՊՀՊ-ում նշված ժամանակահատվածում, Պատվիրատուն պետք է վճարի Խորհրդատուի կանխավճարը: Եթե ՊՀՊ-ով այլ բան սահմանված չէ, կանխավճարի դիմաց վճարումը պետք է կատարվի Խորհրդատուի կողմից Պատվիրատուին

տրամադրած և նրա համար ընդունելի կանխավճարի բանկային ապահովագրությունից հետո ՊՀՊ-ով նշված գումարի (գումարների) չափով և արժույթով (արժույթներով): Այս ապահովագրությունը (i) պետք է ուժի մեջ մնա մինչև կանխավճարը ամբողջովին փոխանցվի, և (ii) պետք է սահմանված լինի Հավելված Ե-ով, կամ Պատվիրատուի կողմից գրավոր կերպով հաստատված որևէ ձևով: Կանխավճարները Պատվիրատուի կողմից պետք է կատարվեն հավասար վճարումներով՝ ՊՀՊ-ում նշված ամիսների քանակով մատուցած Ծառայությունների կատարողականի մասին հաշվետվությունների ներկայացման դեպքում, նախքան նշված կանխավճարի ամբողջովին փոխանցումը:

- (բ) Գործարքների մանրամասները ներկայացնող հաշիվ-ապրանքագրեր: Որքան հնարավոր է արագ, բայց ոչ ուշ, քան տասնհինգ օր (15) յուրաքանչյուր օրացուցային ամսվա ավարտից հետո Ծառայությունները մատուցելու ընթացքում, կամ ՊՀՊ-ում նշված յուրաքանչյուր ժամկետի ավարտից հետո Խորհրդատուն պետք է Պատվիրատուին ներկայացնի ՊԸՊ Հոդված 44-ով և 45-ով վճարման ենթակա գումարների մասին հաշիվ-ապրանքագրեր՝ ստացականներով կամ այլ ուղեկցող փաստաթղթերի պատճեններով: Առանձին հաշիվ-ապրանքագրերը պետք է ներկայացվեն արտարժույթով և ազգային դրամով ի հայտ եկած ծախսերի համար: Յուրաքանչյուր հաշիվ-ապրանքագիր պետք է ներկայացնի վարձատրությունը և փոխհատուցելի ծախսերը առանձին-առանձին:
- (գ) Պատվիրատուն, Խորհրդատուի հաշիվ-ապրանքագրերի համաձայն, վերջիններս և դրանց ուղեկցող փաստաթղթերը ստանալուց հետո, պետք է վճարումները կատարի վաթսուն (60) օրվա ընթացքում: Ներկայացված հաշիվ-ապրանքագրի վճարման միայն այն մասը, որի վերաբերյալ բավարար ուղեկցող փաստաթուղթ չկա կարող է հետաձգվել: Եթե որևէ անհամապատասխանություն հայտնաբերվի ռեալ վճարման և ներկայացրած ծախսերի միջև, Պատվիրատուն կարող է ավելացնել կամ պակասեցնել տարբերությունը որևէ նման վճարումից:
- (դ) Վերջնական վճարում: Սույն Հոդվածի համաձայն վճարումները պետք է կատարվեն միայն վերջնական հաշիվ-ապրանքագրի ներկայացումից հետո, որը Խորհրդատուն ներկայացնում է Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն

հաստատում է այն՝ որպես հաստատման համար բավարար կատարողական: Ծառայությունները համարվում են ավարտված և վերջնականապես ընդունված Պատվիրատուի կողմից, իսկ վերջնական հաշվետվությունը ու հաշիվ-ապրանքագրերը համարվում են բավարար և հաստատված Պատվիրատուի կողմից, վերջնական հաշվետվությունն և հաշիվ-ապրանքագրերը ստանալուց իննսուն (90) օրացուցային օրվա ընթացքում, եթե Պատվիրատուն այդ իննսուն (90) օրվա ընթացքում գրավոր ծանուցում չի ուղարկում Խորհրդատուին՝ մասնավորեցնելով Ծառայությունների մատուցման հաշվետվությունների և հաշիվ-ապրանքագրերի վերաբերյալ բացթողումները: Խորհրդատուն պետք է արագորեն կատարի անհրաժեշտ ճշտումներն, ապա կրկնի փաստաթղթերի ներկայացման գործընթացը: Սույն Պայմանագրի գումարը գերազանցող ցանկացած ավել գումար, որը Խորհրդատուն վճարել է, համաձայն սույն Հոդվածի պետք է Պատվիրատուին փոխհատուցվի Խորհրդատուի կողմից Պատվիրատուի՝ այս մասին ծանուցագիրը ստանալուց երեսուն (30) օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից ներկայացված այս տեսակ որևէ բողոք պետք է ներկայացվի Պատվիրատուի կողմից հաստատված վերջնական հաշվետվությունն և հաշիվ-ապրանքագիրը ստանալուց տասներկու (12) օրացուցային օրվա ընթացքում՝ վերը նշվածի համաձայն:

- (ե) Սույն Պայմանագրով նախատեսված բոլոր վճարումները պետք է կատարվեն ՊՀՊ-ում նշված Խորհրդատուի հաշվեհամարին:
- (զ) Բացառությամբ վերը նշված (դ) կետով սահմանված վերջնական վճարման, բոլորը վճարումները չեն դիտարկվում որպես Ծառայությունների ընդունում և Խորհրդատուին չեն ազատում իր Պայմանագրային պարտականություններից:

46. Տոկոս ուշացված վճարումների համար

46.1 Եթե Պատվիրատուն ՊԸՊ 45.1 (զ)-ում նշված ամսաթվից հետո տասնհինգ (15) օր ուշացրել է վճարումները, ապա Խորհրդատուին տոկոս պետք է վճարվի ցանկացած ուշացված օրվա համար՝ ՊՀՊ-ում սահմանված տարեկան տոկոսադրույքի չափով:

Է. Արդարություն և բարի կամք

47. Բարի կամք

47.1 Սույն Պայմանագրով Կողմերը պարտավորվում են գործել բարի կամքով՝ հարգելով միմյանց իրավունքները, ինչպես նաև ձեռնարկել բոլոր խելամիտ միջոցները սույն Պայմանագրի նպատակներն իրականացնելու համար:

Ը. Վեճերի կարգավորում

48. Վեճերի բարեկամական եղանակով լուծում

48.1 Կողմերը պետք է փորձեն վեճերը բարեկամական եղանակով լուծել՝ փոխադարձ համաձայնությամբ:

48.2 Եթե Կողմերից որևէ մեկը առարկում է մյուս Կողմի որևէ գործողությանը կամ դրա բացակայությանը, ապա առարկող Կողմը կարող է գրավոր Վեճի ծանուցում ուղարկել մյուս Կողմին՝ մանրամասն ներկայացնելով վեճի հիմքերը: Վեճի ծանուցում ստացած Կողմը պետք է այն դիտարկի և գրավոր պատասխանի այն ստանալուց հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում: Եթե Կողմը չի պատասխանում 14 (տասնչորս) օրվա ընթացքում կամ վեճը հնարավոր չէ լուծել այդ Կողմից ստացված պատասխանից հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում, ապա պետք է կիրառել ՊԸՊ Հոդված 49.1-ը:

49. Վեճերի լուծում

49.1 Սույն Պայմանագրից բխող կամ վերջինիս առնչվող ցանկացած վեճ, որը հնարավոր չէ լուծել բարեկամական եղանակով, յուրաքանչյուր Կողմ կարող է արբիտրաժ ներկայացնել՝ համաձայն ՊՀՊ-ում սահմանված դրույթների:

Թ. Իրավասություն

50. Իրավասություն

50.1 Պայմանագրի իրականացման ընթացքում անհրաժեշտ է համապատասխանել Բանկի Իրավասության քաղաքականությանը:

III. Ընդհանուր պայմաններ

Առդիր 1՝ Բանկի քաղաքականություն. Կոռուպցիա և խարդախություն

ԱԶԲ հակակոռուպցիոն քաղաքականությամբ պահանջվում է, որ վարկառուները (ներառյալ ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող շահառուները), ինչպես նաև ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող պայմանագրերերի ներքո վարձված խորհրդատուները հետևեն էթիկայի ամենաբարձր չափանիշներին ընտրության գործընթացի և պայմանագրերի իրականացման ընթացքում: Համաձայն նշված քաղաքականության և սույն Ուղեցույցերի համատեքստում, ԱԶԲ-ը՝

(ա) սահմանում է, սույն դրույթի նպատակներով, ստորև նշված պայմանները՝

(i) «կոռումպացված գործունեություն» նշանակում է առաջարկել, տալ, ընդունել կամ հրահրել դրա տալը կամ վերցնելը՝ ուղղակիորեն կամ անուղղակի, արժեք ունեցող որևէ իր՝ այսպիսով մյուս Կողմի վրա անպատշաճ կերպով ազդեցություն գործելու համար,

(ii) «կեղծարարություն» նշանակում է որևէ արարք կամ բացթողում, այդ թվում թյուր ներկայացում, որի միջոցով գիտակցաբար կամ կոպիտ անփութությամբ մոլորեցվում է կամ փորձ է արվում մոլորեցնել որևէ մեկին՝ ֆինանսական կամ որևէ այլ օգուտ ստանալու կամ պարտավորության կատարումից խուսափելու նպատակով:

(iii) «հարկադիր գործունեություն» նշանակում է վնասել կամ սպառնալ վնասել, լինի դա ուղղակիորեն կամ անուղղակի կերպով, որևէ կողմին կամ կողմի գույքին՝ նապատակ ունենալով ոչ պատշաճ կերպով ազդել կողմի գործողությունների վրա,

(iv) «հանցավոր համաձայնություն» նշանակում է երկու կամ ավելի կողմերի միջև պայմանավորվածություն՝ հակաօրինական նպատակների հասնելու համար՝ ներառյալ հակաօրինական ազդեցությունն այլ կողմի վրա,

(v) Չարաշահել նշանակում է հափշտակել կամ ոչ պատշաճ կերպով օգտագործել ԱԶԲ-ի գործունեության հետ կապված գույքը, լինի դադիտավորության թե հանցավոր անտարբերության հետևանք,

(vi) «Շահերի բախում» է համարվում այն իրավիճակը, երբ մի կողմը այնպիսի շահեր ունի, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ այդ կողմի պաշտոնական պարտականությունների կամ պատասխանատվությունների, պայմանագրային պարտավորությունների կատարման վրա, կամ գործող օրենքի և ընթացակարգերի կատարման վրա,

(vii) «Խանգարող գործունեություն» է համարվում ա) հետազոտության համար փաստացի նյութերի միտումնավոր ոչնչացումը, կեղծումը, փոփոխումը կամ թաքցնելը, բ) հետազոտողներին կեղծ հայտարարություն անելը՝ ԱԶԲ-ի հետազոտությունը խոչընդոտելու նպատակով, գ) որևէ կողմին սպառանալը, վախեցնելը կամ ստիպելը, որպեսզի հետազոտողներին ոչ մի նյութական կարևոր ինֆորմացիա չտրամադրվի, դ) նյութապես խոչընդոտելը ԱԶԲ-ի՝ աուդիտի պայմանագրային իրավունքների իրացմանը կամ տեղեկատվություն ստանալուն,

(viii) Այս դրույթները միասին կոչվում են «ամբողջականության խախտում»:

(բ) պետք է մերժել այն պայմանագրերը, եթե պարզ է դառնում, որ առաջարկված Խորհրդատուն ուղղակիորեն կամ միջնորդի միջոցով ներգրավված է «ամբողջականության խախտման» մեջ՝ պայմանագրի շնորհման համար մրցակցության ընթացքում,

(գ) պետք է չեղյալ համարել ֆինանսավորման այն մասը, եթե հայտնի է դառնում, որ դրա համար վարկառուի ներկայացուցիչները երբևէ ներգրավված են եղել «ամբողջականության խախտման» մեջ խորհրդատուների ընտրման գործընթացի ընթացքում, կամ այդ պայմանագրի կատարման ընթացքում, եթե վարկառուն ԱԶԲ-ի համար բավարար համարվող և ճիշտ ժամանակին ու պատշաճ միջոցներ չի ձեռնարկել, և

(դ) ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականության, Արդարության սկզբունքների և Ուղեցույցի համապատասխան, ցանակացած ժամանակ, պետք է պատժամիջոց կիրառել Կազմակերպության կամ անհատի նկատմամբ, նաև նրան որպես հավակնորդ չեղյալ համարել ընդհանրապես կամ որոշ ժամանակով, խորհրդատու կազմակերպության, անհատի կամ նրա իրավահաջորդի մասնակցությունը ԱԶԲ կողմից ֆինանսավորվող կամ ֆինանսավորումը կառավարող գործունեություններում, եթե երբևէ հայտնի դառնա, որ այդ խորհրդատուն կամ անհատը ուղղակի կամ անուղղակիորեն մասնակցում, կամ մասնակցել է ամբողջականության խախտման կամ արգելված գործունեության մեջ՝ ԱԶԲ ֆինանսավորման պայմանագրի համար մրցակցելու կամ այն կատարելու ընթացքում:

IV. Պայմանագրի Հատուկ Պայմաններ

ՊԸՊ Հոդվածի համարը	Պայմանագրի Ընդհանուր Պայմանների փոփոխություններ և լրացումներ
1.1(բ) և 3.1	Պայմանագիրը պետք է մեկնաբանվի ըստ Հայաստանի Հանրապետության օրենքի:
4.1	Լեզուն անգլերենն է:
6.1 և 6.2	<p>Պատվիրատու՝ «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Տիգրան Մեծի 4, 7-րդ հարկ Հեռ. +(374) 012 20-10-09, Էլ.փոստ: info@tpio.am</p> <p>Խորհրդատու՝ .</p> <p>Ում՝ .</p> <p>Ֆաքս/հեռ՝ .</p> <p>Էլ.փոստ. .</p>
8.1	
9.1	<p>Լիազորված ներկայացուցիչներ՝</p> <p>Պատվիրատուի համար՝ .</p> <p>Խորհրդատուի համար՝</p>
11.1	Ոչ կիրառելի
12.1	<p>Պայմանագրի դադարեցում ուժի մեջ չմտնելու պատճառով.</p> <p>Ժամկետը՝ 50 օր:</p>

13.1	<p>Ծառայությունների մեկնարկ՝ Պատվիրատուին պետք է գրավոր ներկայացվի Հիմնական փորձագետների կողմից աշխատանքները մեկնարկելու համար հասանելիության հաստատում՝ ստորագրված յուրաքանչյուր Հիմնական փորձագետի կողմից:</p>
14.1	<p>Պայմանագրի վավերականության ժամկետի ավարտ՝</p>
21 b.	<p>Պատվիրատուն իրավունք է վերապահում որոշելու, թե արդյոք Խորհրդատուն պետք է որակազրկվի ապրանքներ, աշխատանքներ կամ ոչ Խորհրդատվական ծառայություններ մատուցելուց՝ ՊԸՊ 21.1.3 հոդվածում նկարագրված շահերի բախման բնույթի պատճառով:</p>
23.1	<p>Պատվիրատուի նկատմամբ Խորհրդատուի պատասխանատվության սահմանափակում.</p> <p>(ա) Բացառությամբ Խորհրդատուի կամ Ծառայությունների կատարման հետ կապված նրա անունից գործող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից կատարված կոպիտ անփութության կամ դիտավորյալ գործողությունների դեպքերի, Խորհրդատուն Պատվիրատուի առջև չի կրելու որևէ պատասխանատվություն Պատվիրատուի գույքին պատճառված վնասի համար.</p> <p>(i) ցանկացած տեսակի անուղղակի վնասի կամ կորստի համար, և</p> <p>(ii) ցանկացած ուղղակի կորստի կամ վնասի համար, որը գերազանցում է Պայմանագրի ընդհանուր արժեքի չափը:</p> <p>(բ) Սույն պատասխանատվության սահմանափակումը չպետք է</p> <p>(i) ազդի Խորհրդատուի պատասխանատվության վրա, առկայության դեպքում, երրորդ անձանց Խորհրդատուի կամ Ծառայությունների կատարման հետ կապված նրա անունից գործող ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից պատճառված վնասների վրա,</p> <p>(ii) դիտարկվի որպես Խորհրդատուին իր որևէ պատասխանատվության սահմանափակում կամ բացառում, որը արգելված է գործող օրենսդրությամբ:</p>
24.1	<p>Ռիսկերի ապահովագրումը պետք է ծածկի հետևյալը՝</p>

	<p>(ա) մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունն առնվազն սույն Պայմանագրի գնի չափով:</p> <p>(բ) Խորհրդատուի կամ իր փորձագետների կամ Ենթախորհրդատուների երրորդ անձանց հանդեպ ավտոտրանսպորտային միջոցների շահագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրում, որը գործում է Պատվիրատուի երկրում, նվազագույն ծածկումով՝ համաձայն համապատասխան գործող օրենսդրական ակտի:</p> <p>(գ) Ոչ կիրառելի</p> <p>(դ) Ոչ կիրառելի</p> <p>(ե) կորստի կամ վնասի ապահովագրություն, ինչպիսիք են՝ (i) սույն Պայմանագրի շրջանակներում տրամադրված միջոցներով ամբողջությամբ կամ մասամբ ձեռքբերված սարքավորումներ, (ii) Ծառայությունների մատուցման ընթացքում Խորհրդատուի կողմից օգտագործվող գույք, (iii) Ծառայությունների մատուցման ընթացքում Խորհրդատուի կողմից մշակված ցանկացած փաստաթղթեր:</p>
27.1	Ոչ կիրառելի
27.2	Խորհրդատուն, առանց Պատվիրատուի նախնական գրավոր հաստատման, չպետք է օգտագործի այդ փաստաթղթերը և համակարգչային ծրագիրը սույն Պայմանագրի հետ չլապված նպատակների համար:
41.2	Պայմանագրային գին
42.3	Գնի ճշգրտում չի կիրառվելու:
43.1 և 43.2	<p>[Պատվիրատուն Խորհրդատուին, ենթախորհրդատուին և փորձագետներին հատուցում է բոլոր այն անուղղակի հարկերը, տուրքերը, վճարները, գանձումները և այլն, որոնք Պատվիրատուի երկրում գործող օրենսդրության համաձայն սահմանված են Խորհրդատուի, ենթախորհրդատուների և փորձագետների համար, մասնավորապես.</p> <p>(ա) Ծառայությունների մատուցման կապակցությամբ Խորհրդատուի, ենթախորհրդատուների և փորձագետների օգտին կատարված ցանկացած վճարումներ (բացառությամբ Պատվիրատուի երկրի քաղաքացիներին կամ մշտապես բնակվողներին),</p> <p>(բ) Խորհրդատուի, ենթախորհրդատուների և փորձագետների կողմից ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուի երկիր բերված ցանկացած սարքավորումներ և</p>

	<p>նյութեր, որոնք, հիշյալ տարածք բերվելուց հետո, հետագայում դուրս կհանվեն նրանց կողմից,</p> <p>(գ) Ճառայությունների մատուցման նպատակով ներմուծված ցանկացած այնպիսի սարքավորումներ, որոնք ներկրվել է և վճարվել է Պատվիրատուի տրամադրած միջոցներից և հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը,</p> <p>(դ) Խորհրդատուի, ենթախորհրդատուների կամ փորձագետների (բացառությամբ Պատվիրատուի երկրի քաղաքացիների կամ մշտապես բնակվողների) կամ այդ փորձագետների լիազոր ներկայացուցիչների կողմից իրենց անձնական օգտագործման համար բերված ցանկացած այնպիսի գույք, որը հետագայում նրանց կողմից դուրս կհանվի Պատվիրատուի երկրից իրենց հեռանալուն պես, պայմանով, որ`</p> <ul style="list-style-type: none"> (i) Խորհրդատուն, ենթախորհրդատուները կամ փորձագետները Պատվիրատուի երկիր գույքը ներմուծելու ժամանակ պահպանել են Պատվիրատուի երկրի մաքսային ընթացակարգերը, և (ii) Եթե Խորհրդատուն, ենթախորհրդատուները կամ փորձագետները ետ չեն տանում, և շարունակում են Պատվիրատուի երկրում տնօրինել ցանկացած գույք, որը ազատվել էր մաքսային հարկերից և տուրքերից, ապա Խորհրդատուն, ենթախորհրդատուները կամ փորձագետները, կախված դեպքից` (ա) կրում են Պատվիրատուի երկրի օրենսդրությամբ սահմանված մաքսատուրքեր և հարկեր վճարելու պարտավորությունը, կամ (բ) հատուցում են Պատվիրատուին, եթե տվյալ գույքը Պատվիրատուի երկիր ներմուծելու ժամանակ այդ հարկերն ու տուրքերը վճարել է Պատվիրատուն:
<p>44.1</p>	<p>Տեղական արժույթը` ՀՀ դրամ</p>
<p>45.1(ա)</p>	<p>Կանխավճարի և կանխավճարի բանկային երաշխիքի` համար պետք է կիրառվեն հետևյալ դրույթները</p> <p>(1) <i>Պայմանագրի արժեքի 10 տոկոս</i> կանխավճարը պետք է կատարվի Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած 28 օրվա ընթացքում: Կանխավճարի պահումները իրականացվելու են համամասնորեն սկսած առաջին ... ամիսների ընթացքում ներկայացված կատարողականների գումարից` մինչ կանխավճարի գումարի ամբողջական մարումը:</p>

	(2) Կանխավճարի բանկային երաշխիքը պետք է լինի կանխավճարի արժույթով և չափով:
45.1(բ)	<p>Խորհրդատուն պետք է յուրաքանչյուր ամիս Պատվիրատուին ներկայացնի մանրամասն հաշվետվություններ:</p> <p>Հիմնավորող փաստաթղթերի փաթեթը, որը ներկայացվում է հաշիվ-ապրանքագրի հետ որոշակի այն ժամանակահատվածի համար, որի համար ՏԱ-ի 3-րդ աղյուսակում նշված է հաշվետվություն/ներ ներկայացնելու պահանջը, պետք է ներառի ընդունման վկայագիր, որը հաստատում է Է Պատվիրատուի կողմից ներկայացված հաշվետվությունը/ները ընդունելու փաստը:</p>
45.1(ե)	<p>Չաշիվներն են՝</p> <p>Տեղական արժույթով՝</p>
46.1	Տոկոսադրույքը կազմում է՝ 3.5% (երեք ամբողջ հինգ տասնորդական տոկոս)
49.	<p>Վեճերը ենթակա են լուծման արբիտրաժի միջոցով՝ համաձայն ստորև նշված դրույթների.</p> <p>1. <u>Արբիտրների ընտրություն:</u> Յուրաքանչյուր կողմից ցանկացած վեճ, որը ներկայացվել է արբիտրաժին, պետք է լսվի մեկ արբիտրի կողմից կամ երեք (3) արբիտրներից բաղկացած արբիտրաժային հանձնաժողովից՝ համաձայն հետևյալ դրույթների.</p> <p>ա) Երբ Կողմերը համաձայնվում են, որ վեճը վերաբերում է տեխնիկական հարցերի, նրանք կարող են նշանակել մեկ արբիտր կամ, նման վարույթ ձեռնարկած Կողմի կողմից առաջարկված արբիտրի թեկնածության շուրջ 30 օրվա ընթացքում մյուս Կողմի համաձայնությունը չստանալու դեպքում Կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել FIDIC հանձնաժողովին, Լոզան, Շվեյցարիա առնվազն հինգ (5) արբիտրի թեկնածուներից բաղկացած ցուցակ կազմավորելու նպատակով: Ցուցակը ստանալուց հետո Կողմերն իրենց ընտրությամբ հռչեռացնում են են արբիտրների անունները ցուցակից, և ցուցակում մնացած վերջին թեկնածուն նշանակվում է վիճահարույց հարցը լուծելու համար միակ արբիտր: Եթե ցուցակում մնացած վերջին թեկնածուն այս կերպ չի նշանակվում ցուցակի ստացման օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում, Կողմերից յուրաքանչյուրի</p>

	<p>խնդրանքով Լոզանի FIDIC հանձնաժողովը այդ ցուցակից կամ այլ կերպ նշանակում է վեճի միակ արբիտր՝ վիճահարույց հարցի լուծման համար:</p> <p>բ) Երբ Կողմերը համաձայն չեն, որ վեճը վերաբերում է տեխնիկական հարցին, Պատվիրատուն և Խորհրդատուն (յուրաքանչյուրը) պետք է նշանակեն մեկական արբիտր, և այդ երկու արբիտրները պետք է միասին նշանակեն երրորդ արբիտրին, որը գլխավորելու է արբիտրների հանձնաժողովը: Եթե Կողմերի կողմից նշանակված արբիտրներին չի հաջողվում նշանակել երրորդ արբիտրին վերջիններիս նշանկումից հետո 30 օրվա ընթացքում, ապա երրորդ արբիտրը, ցանկացած Կողմի պահանջով, պետք է նշանակվի Տյուրիիսի Առևտրաարդյունաբերական պալատի կողմից:</p> <p>գ) Եթե վերոնշյալ (բ) կետում նշված վեճի դեպքում Կողմերից որևէ մեկը չի նշանակում իր արբիտրին մյուս Կողմի արբիտրի նշանակումից հետո 30 օրվա ընթացքում, ապա արբիտր նշանակած Կողմը կարող է դիմել ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին՝ վիճահարույց հարցի համար մեկ արբիտր նշանակելու հարցումով, և նշված դիմումի համաձայն նշանակված արբիտրը պետք է լինի վեճի միակ արբիտրը:</p>
	<p><u>2. Ընթացակարգի կանոններ.</u> Եթե այլ բան սահմանված չէ, ապա արբիտրաժի վարույթը պետք է կարգավորվի ըստ Միավորված ազգերի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի արբիտրաժի կանոնակարգի (UNCITRAL), որը ուժի մեջ է գնտվում Պայմանագրի կնքման պահին:</p> <p><u>3. Փոխարինող արբիտրներ.</u> Եթե, որևէ պատճառով, արբիտրը անկարող է կատարել իր գործառնությունը, ապա պետք է նշանակվի փոխարինող՝ նույն այն կարգով, ինչպես հիմնական արբիտրը:</p> <p><u>4. Արբիտրների ազգությունը և որակավորումը.</u> 1(ա)ից մինչև 1 (գ) կետերի համաձայն նշանակված միակ կամ երրորդ արբիտրը պետք է լինի միջազգայնորեն ճանաչում ունեցող իրավական կամ տեխնիկական ոլորտի փորձագետ, ով մեծ փորձ ունի վիճահարույց հարցում և ով չպետք է ունենա Խորհրդատուի երկրի քաղաքացիություն կամ համատեղ ձեռնարկության որևէ անդամների երկրի քաղաքացիություն կամ կառավարության երկրից: Սույն հոդվածի համատեքստով “երկիր” նշանակում է հետևյալը՝</p> <p>(ա) Խորհրդատուի գրանցման երկիր, կամ համատեղ ձեռնարկության որևէ անդամների երկիր, կամ</p>

	<p>(բ) Այն երկիրը, որտեղ գտնվում է Խորհրդատուի կամ համատեղ ձեռնարկության որևէ անդամների հիմնական գործունեության վայրը, կամ</p> <p>(գ) Խորհրդատուի բաժնետերերի կամ համատեղ ձեռնարկության որևէ անդամների մեծամասնության երկիրը, կամ</p> <p>(դ) Ենթախորհրդատուների երկիրը, եթե վեճի մեջ ենթախորհրդատուներ են ներգրավված:</p>
	<p>5. Այլ. Ստորև նշված ցանկացած արբիտրաժային վարույթի ընթացքում՝</p> <p>(ա) եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվել, վարույթը պետք է իրականացվի Սինգապուրում:</p> <p>(բ) Պաշտոնական լեզուն բոլոր նպատակների համար պետք է լինի <i>Անգլերենը</i>, և</p> <p>(գ) միակ արբիտրի կամ արբիտրների մեծամասնության (կամ,, եթե այդպիսի մեծամասնություն չկա, երրորդ արբիտրի) որոշումը պետք է վերջնական և պարտադիր կատարման ենթակա լինի, ինչպես լինի կիրառելի ցանկացած իրավագոր դատարանում և սույնով Կողմերը հրաժարվում են նշված հարկադիր կատարման նկատմամբ որևէ առարկություններից կամ անձեռնմխելիության պահանջներից:</p>

Վ. Հավելվածներ

Հավելված Ա. Տեխնիկական առաջադրանք

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

N°	Անուն, ազգանուն, ազգություն	Պաշտոն	Փորձագետների ներդրումը (մարդ/ամիս) յուրաքանչյուր արդյունքի կտրվածքով (թվարկված է TECH-5-ում)											Ժամանակի վրա հիմնված ներդրում (ամիսներով)			
			D1	D2	D3	D4	D5	D6	D7	D8	D9	D10	խորհրդատուի երկիր	պատվիրատուի երկիր	ԸՆԴՀԱՆՈՒՐ		
ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ																	
KE1																	
KE2																	
KE3																	
KE4																	
KE5																	
KE6																	
N-1																	
N-2																	
N-3																	
N-4																	
N-5																	
N-6																	
N-7																	
N-8																	
												ԸՆԴՀԱՆՈՒՐ					
												ԸՆԴՀԱՆՈՒՐ					

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՇԻՎ

No.	Անուն Ազգանուն	Քաղաքացիություն	Մարդ-ամիս վարձատրություն	Ժամանակի ներդրում մարդ/ամիս (TECH-6-ից)	{Արժույթ # 1- ինչպես FIN-2- ում}	{Արժույթ}	{Արժույթ# 3- ինչպես FIN-2-ում}	{Տեղական արժույթ, ինչպես FIN-2-ում}
	Պաշտոն (ըստ TECH- 6-ի)	Ընկերություն						
Հիմնական փորձագետներ (միջազգային)								
K-1								
K-2								
K-3								
K-4								
K-5								
K-6								
N-1								
N-2								
N-3								
N-4								

N-5								
N-6								
N-7								
N-8								

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ

1. Ձև FIN-4 ՀԱՏՈՒՑՎՈՐ ԾԱԽՍԵՐԻ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ

Միանվագ գումարի պայմանագրի ներքո օգտագործելու դեպքում, սույն Ձևով տրամադրվող տեղեկատվությունը պետք է օգտագործվի միայն Պայմանագրի առավելագույն գումարարային շեմի հաշվարկման հիմքը ցույց տալու համար, պայմանագրի շուրջ բանակցություններում կիրառվող հարկերը հաշվարկելու և, անհրաժեշտության դեպքում՝ Պատվիրատուի կողմից պահանջվող լրացուցիչ լրացուցիչ ծառայությունների համարժեքի դատարկության վճարումներ հաստատելու համար: : Այս ձևը չի կարող օգտագործվել որպես միանվագ պայմանագրերով վճարումների հիմք

Ծախսերի, պայմանական գումարների և չնախատեսված ծախսերի տեսակ	Քանակ	Միավոր	Արժույթ	Միավոր արժեք	Արտասահմանյան արժույթ (ԱՄՆ դոլար)	{Արժույթ # 2- ըստ FIN-2}	{Արժույթ# 3- ըստ FIN-2}	{Տեղական արժույթ - ըստ FIN-2}
Փոխհատուցվող ծախսեր								
<i>Միջազգային ճամփորդություն¹</i>								
Օրապահիկ միջազգային փորձագետների համար *								
Օրապահիկ ազգային փորձագետների համար *								
Կացություն միջազգային փորձագետների համար *								
Հյուրանոցային ծախսեր ոչ լրիվ դրույթով միջազգային աշխատակազմի համար*								
Ազգային փորձագետների կացություն*								
<i>Տրանսպորտի և ավտոմեքենայի վարձակալություն (ավտոմեքենայի վարձակալություն, այդ թվում պահպանում, սպահովագրություն, վառելիք, վարորդի ծառայություններ)</i>								

¹ Միջազգային ճանապարհորդությունը վճարվում է ինքնարժեքով:

միջազգային և ազգային անձնակազմի համար) ²								
Տեղամասային գրասենյակի շահագործում և պահպանում (ներառյալ գրասենյակային կահույք, սարքավորումներ, կապի միջոցներ և գրենական պիտույքներ)								
Տեղամասային գրասենյակի անձնակազմ ³								
Ընդհանուր՝ փոխհատուցվող ծախսեր								
Պայմանական գումարներ								
Պայմանական գումարներ (հետազոտություններ, ուսումնասիրություններ, հաշվետվություններ)								
Լաբորատոր ստուգման փորձարկումներ և օժանդակ անձնակազմ ^{**}								
Ընդհանուր՝ Պայմանական գումարներ								
Չնախատեսված ծախսեր								
Ընդամենը՝ փոխհատուցվող ծախսեր + պայմանական գումարներ + չնախատեսված ծախսեր								

* Ներառված է Փորձագետների վարձատրության դրույքաչափի մեջ:

** Լաբորատոր ստուգման փորձարկումներ և օժանդակ անձնակազմը կտրամադրվի Շինարարական աշխատանքների պայմանագրերով

2. Բոլոր այլ ծախսերն ու պայմանական գումարները հատուցվում են իրական արժեքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Հավելվածում, և ոչ մի դեպքում հատուցումը չի կարող գերազանցել Պայմանագրի արժեքը:

² Մեկ ավտոմեքենայի վարձակալություն (լիարժեք մարդատար խցիկով և ամբողջական շարժաբեքով արտաճանապարհային ավտոմեքենա՝ բենզինով), ներառյալ վառելիքի ծախսը, սպահովագրությունը, վարորդի ծառայությունը և պահպանումը): Լրացուցիչ 2 ավտոմեքենայի վարձույթ և շահագործման ծախսեր: Այս լրացուցիչ վարձավճարները կկատարվեն միայն Խորհրդատուի հաշվին:

³ Խորհրդատուն կտրամադրի այս անձնակազմը իր սեփական միջոցների հաշվին:

ՀԱՎԵԼՎԱԾ Ե. ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԱ

[տես ՊԸՊ Հոդված 45.1 (ա) և ՊՀՊ 45.1 (ա)]

{ Երաշխավորի ձևաթուղթը կամ SWIFT նույնականացման կոդը }

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

[Տես ԸՊ կետ 45.1. և ՀՊ կետ 45.1.]

{ Երաշխավորողի ձևաթուղթը և SWIFT-ծածկագիրը }

Երաշխավոր` [*Բանկի անվանումը և գրասենյակի մասնաճյուղի հասցեն*]

Շահառու` [*Գործատուի անունն ու հասցեն*]

Ամսաթիվ` _____

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԵՐԱՇԽԻՔԻ համարը` _____

Մենք տեղյակ ենք, որ _____ [*Խորհրդատվական կազմակերպության անվանումը կամ համատեղ ձեռնարկության անվանում, այնպես ինչպես ներկայացված է Պայմանագրում*] (այսուհետ՝ “*խորհրդատու*”) _____ օրը, Շահառուի հետ No --- պայմանագիր է կնքել, [*աշխատանքների հակիրճ նկարագրությունը*] իրականացնելու համար (այսուհետ “*Պայմանագիր*”):

Բացի այդ, մենք հասկանում ենք, որ Պայմանագրի պայմանների համաձայն կանխավճարային գումարը [*գումարը թվերով*] [*գումարը բառերով*] կատարվում է կանխավճարային երաշխիքի դիմաց:

Խորհրդատուի խնդրանքով մենք, որպես Երաշխավոր, սույնով անվերապահորեն ստանձնում ենք վճարել Շահառուին ցանկացած գումար կամ գումարներ, որը/որոնք սակայն չի գերազանցի ___ [*գումարը թվերով*]* [*գումարը բառերով*] ընդհանուր գումարը, այսպիսի գումարը ենթակա է վճարման Շահառուի համապատասխան պահանջի դեպքում, հիմնավորված Շահառուի գրավոր հայտարարությամբ, որը ներկայացվում է պահանջի մեջ կամ առանձին ստորագրված փաստաթղթի տեսքով, ուր պետք է նշվի, որ Խորհրդատուն Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները խախտել է, քանի որ Խորհրդատուն ձախողել է կանխավճարի մարումը՝ համաձայն Պայմանագրի պայմանների՝ նշելով այն գումարը, որը Խորհրդատուն ձախողել է մարել:

¹ Երաշխավորը պետք է նշի գումարը՝ ներկայացնելով կանխավճարի գումարը, որն արտահայտված է կամ Պայմանագրում սահմանված կանխավճարի արժույթով(ներով) կամ Պատվիրատուի համար ընդունելի ազատ փոխարկելի արժույթով:

Սույն երաշխավորագրի ներքո կատարվելիք ցանկացած վճարման պայմանն ու պահանջն է, որ վերը նշված կանխավճարը պետք է ստացվի Խորհրդատուի _____ բանկային հաշվին, [բանկի անվանումը ու հասցեն]:

Երաշխավորագրի առավելագույն գումարը աստիճանաբար կկրճատվի Խորհրդատուի կողմից փակվող կանխավճարային գումարներով, այնպես ինչպես նշված է Պատվիրատուի կողմից մեզ ներկայացվելիք հաստատված ֆինանսական հաշվետվություններում կամ “վճարված” նշումով հաշիվ-ապրանքագրերում: Երաշխիքի ժամկետը ամենաուշը կլրանա Խորհրդատուի կողմից կանխավճարի գումարի ամբողջական փոխհատուցումը հաստատող, վճարման վկայագիրը կամ վճարված հաշիվ-ապրանքագիրը ստանալուն պես, կամ [օր, ամիս, տարի]²՝ կախված նրանից, թե նշված երկուսից որը տեղի կունենա ավելի շուտ: Հետևաբար, երաշխավորագրի շրջանակներում վճարման ցանկացած պահանջ պետք է ստանանք սույն գրասենյակում նշված օրը կամ մինչև այդ :

Սույն երաշխավորագրի կապակցությամբ կիրառվում են Առաջին իսկ պահանջով երաշխիքների համընդհանուր կանոններին, ICC թիվ 758 Հրատարակություն

[ստորագրություն(ներ)ը]

Ծանուցում՝ Շեղատառերով գրված հատվածները ուղեցույցներ են, պահանջի երաշխավորագիրը գրելու համար, որոնք կշնջվեն վերջնական փաստաթղթից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

² Նշել ակնկալվող ժամկետը լրանալու ամսաթիվը: Պայմանագրի ավարտի երկարացման դեպքում Պատվիրատուն պետք է Երաշխավորից պահանջի սույն երաշխիքի երկարացումը: Այդ պահանջը պետք է գրավոր լինի և պետք է ներկայացվի նախքան երաշխիքում սահմանված ժամկետը լրանալու ամսաթիվը: Սույն երաշխիքը մշակելիս Պատվիրատուն կարող է ավելացնել հետևյալ տեքստը նախավերջին պարբերության վերջում՝ «Երաշխավորողը համաձայն է սույն երաշխիքի մեկանգամյա երկարացման, որը չի գերազանցի [վեց ամիս][մեկ տարի] ի պատասխան նման երկարացման համար Պատվիրատուի կողմից գրավոր դիմումի: Այդ դիմումը պետք է ներկայացվի Երաշխավորին նախքան երաշխիքի ժամկետի լրանալու ամսաթիվը»: